

*Հաստատված է՝
«Երևանի Վ.Բրյուսովի
անվան պետական
լեզվահասարակագիտական
համալսարան» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի
2019 թվականի մարտի 6-ի
N° 4 նիստի որոշմամբ*

**ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐԸ
ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ**

2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԵՊԼՀ ՏԵՍԼԱԿԱՆ.....	5
ԵՊԼՀ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ.....	5
ԲԱԺԻՆ 1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆ.....	7
ԲԱԺԻՆ 2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆ	18
ԲԱԺԻՆ 3. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ.....	25
ԲԱԺԻՆ 4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ	29
ԲԱԺԻՆ 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆ.....	35
ԲԱԺԻՆ 6. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ.....	39
ԲԱԺԻՆ 7. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	42
ԲԱԺԻՆ 8. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....	54
ԲԱԺԻՆ 9. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....	59
ԲԱԺԻՆ 10. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ (ՏՀՏ).....	66
ԲԱԺԻՆ 11. ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	70
ԲԱԺԻՆ 12. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ.....	73

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲՈԿ	Բարձրագույն որակավորման կոմիտե
ԶԼՄ	Զանգվածային լրատվամիջոցներ
ՀՀ ՈԱՇ	Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակ
ՄԿԾ	Մասնագիտության կրթական ծրագիր
ՊԻԳԲ	Պլանավորել, իրականացնել, գնահատել, բարելավել (ՊԻԳԲ շրջափուլ)
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ

ԵՊԼՀ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԵՊԼՀ	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան
ԳՈՒԿ	Գիտաուսումնական կենտրոն
ԷՈՒՌ քաժին	Էլեկտրոնային ուսուցման և ռեսուրսների քաժին
ԿՀ	Կանոնակարգային հանձնաժողով
ՀՇԿ քաժին	Համալսարանական շարունակական կրթության քաժին
ՈԱԲ կենտրոն	Որակի ապահովման և բարեփոխումների կենտրոն
ՏՀՏ քաժին	Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների քաժին
ՈՒԳԸ	Ուսանողական գիտական ընկերություն
ՈՒԽ	Ուսանողական խորհուրդ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիտելիքահենք տնտեսության և հասարակության զարգացման գործընթացներում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունները հանդես են գալիս որպես գիտելիքի ստեղծման ու փոխանցման, նորարարությունների ու ստեղծագործական մտքի խթանման առանցքային դերակատարներ:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման արդի կարիքները, հասարակության աճող պահանջմունքները և աշխատաշուկայի պահանջները, ինչպես նաև բարձրագույն կրթության ոլորտում ընթացող համաշխարհային գործընթացները պահանջում են սահմանել Երևանի Վ. Բոյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի (ԵՊԼՀ) զարգացման նոր ռազմավարություն: Վերջինս պետք է նպաստի երկրում լեզվաբանության, հասարակական գիտությունների, կրթության, մանկավարժության, տուրիզմի և սերվիսի ոլորտների զարգացմանը՝ ապահովելով որակյալ մասնագետներով, որոնք ունակ են առաջադրել նոր գաղափարներ, ստեղծել նոր գիտելիք, նախագծել նոր ծրագրեր, հիմնել նոր աշխատատեղեր և նախաձեռնություններ:

Սույն ռազմավարական ծրագիրը հիմնվում է ԵՊԼՀ-ի մինչ օրս ունեցած ձեռքբերումների ու հաջողությունների, մրցակցային առավելությունների ու մասնագիտական ներուժի, ինչպես նաև բուհի հետագա զարգացման իրատեսական հնարավորությունների վրա: Միաժամանակ այն լուրջ մարտահրավերներ է առաջադրում ԵՊԼՀ-ին՝ պահանջելով հետևողական աշխատանք, մարդկային ներուժի և ֆինանսական ռեսուրսների իրաչափ կիրառում:

Ռազմավարական ծրագիրը ենթադրում է փոխկապակցված գործողությունների միաժամանակյա և հաջորդական իրականացում՝ ուղղված ԵՊԼՀ-ի **ՄԿԾ-ների արդիականացմանը, ուսումնական և գիտահետազոտական գործունեության բարելավմանը, կառավարման, ֆինանսատնտեսական ու ձեռնարկատիրական գործառույթների զարգացմանը, ուսանողների հետագա զբաղվածության հնարավորությունների և սոցիալական աջակցության քաղաքականության ընդլայնմանը, ինչպես նաև հասարակական գործունեության բազմազանեցմանը:**

ԵՊԼՀ ՏԵՍԼԱԿԱՆ

ԵՊԼՀ-ի գործունեությունն ուղղված է ստեղծագործ միտք, մրցունակություն, կրթական նորարարություններ, անձի շարունակական զարգացում ապահովող կրթական և գիտահետազոտական միջավայրի ստեղծմանը:

ԵՊԼՀ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ԵՊԼՀ առաքելությունն է ապահովել միջազգայնորեն մրցունակ ու որակյալ մասնագետների պատրաստումը լեզվաբանական, հասարակագիտական, մանկավարժական, սերվիսի, ինչպես նաև հումանիտար ու սոցիալական գիտությունների այլ ոլորտներում՝ նպաստելով անձի շարունակական զարգացմանը, գիտելիքների ստեղծմանն ու փոխանցմանը, մարդկային ներուժի ձևավորմանը և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման խթանմանը:

ԵՊԼՀ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Սույն ծրագիրը նկարագրում է ԵՊԼՀ երակարաժամկետ զարգացման հիմնական նպատակները, գերակայություններն ու ռազմավարական ուղղությունները, գործունեության նպատակները, խնդիրներն ու գործողությունները՝ ըստ յուրաքանչյուր ուղղության:

ԵՊԼՀ երակարաժամկետ զարգացման հիմնական նպատակն է շարունակաբար բարձրացնել բուհում կրթության որակն ու արդիականությունը և բազմազանեցնել մասնագիտությունների կրթական ծրագրերը՝ հասարակության ու շուկայի պահանջներին և համաշխարհային զարգացմանը համահունչ:

«Կրթության որակը» բարդ, բազմատարր և բազմագործոն հասկացություն է: Ներկայումս միջազգայնորեն այն սահմանվում է որպես «կրթական գործընթացի ամբողջական արդյունք», որը համապատասխանում է պետության ու հասարակության պահանջներին և սովորողներին ապահովում է անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով, արժեքային համակարգով ու մասնագիտական որակներով՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով նրանց սովորել ողջ կյանքի ընթացքում:

Ուստի «կրթության որակը» վերաբերում է՝

- սովորողներին, որոնք ունեն բավարար մասնագիտական պատրաստվածություն, պատրաստակամ են սովորելու և մասնակցելու ուսումնական գործընթացին,

- կրթական միջավայրին, որը մատչելի է, անվտանգ և ապահովում է առողջության պահպանումը, ինչպես նաև հագեցած է կրթական անհրաժեշտ ու ժամանակակից ռեսուրսներով և գույքով,
- կրթության բովանդակությանը, որը սահմանված է կրթական և առարկայական ծրագրերով ու ուսումնական պլաններով և արտացոլված է ուսումնամեթոդական նյութերում,
- որակյալ պրոֆեսորադասախոսական կազմին, որն օգտագործում է ժամանակակից ուսանողակենտրոն ուսուցման մեթոդներ,
- ուսումնառության վերջնարդյունքներին, որոնք ներառում են սովորողների գիտելիքները, կարողությունները, հմտությունները, արժեքային համակարգն ու աշխարհայացքը և ուղղված են հասարակության զարգացման գործում սովորողների ակտիվ մասնակցությանը:

Հաշվի առնելով կրթության որակի վերը նշված սահմանումը՝ ակհայտ է դառնում, որ ԵՊԼՀ-ի երկարաժամկետ զարգացման հիմնական նպատակի իրագործման համար առաջնահերթ է սույն ռազմավարությունում նկարագրված և միմյանց հետ փոխկապակցված նպատակների իրագործումը և խնդիրների լուծումը:

ԵՊԼՀ-ի՝ ստորև նկարագրված երկարաժամկետ զարգացման ուղղությունները, խնդիրներն ու գործողությունները խիստ փոխկապակցված են, և դրանց տարանջատումը բավականին դժվար է, ուստի դրանց դասակարգումն ըստ ուղղությունների հաճախ կրում է պայմանական բնույթ:

ԲԱԺԻՆ 1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակներ

- Բարձրացնել ԵՊԼՀ-ում ուսումնական գործընթացի և կրթական ծառայությունների արդյունավետությունը՝ ապահովելով դրանց բազմազանությունն ու մրցունակությունը
- Ապահովել ԵՊԼՀ-ի ՄԿԾ-ների բարելավումը, արդիականացումը և բազմազանացումը՝ համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին և ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչներին
- Արդիականացնել ԵՊԼՀ ուսումնական գործընթացի կառավարման համակարգը՝ ապահովելով համապատասխան ռեսուրսներ և կանոնակարգող փաստաթղթային հենք
- Ներմուծել օտար լեզուներով դասավանդվող ՄԿԾ-ներ՝ ապահովելու օտարերկրյա սովորողների հոսքը ԵՊԼՀ

Ռազմավարական նպատակների նախանշվող վերջնարդյունքներ

- ԵՊԼՀ-ում բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետներ՝ աշխատաշուկայի արդի պահանջներին և ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչներին համապատասխան
- ԵՊԼՀ-ում ուսումնական գործընթացի կառավարման արդյունավետ համակարգի առկայություն՝ ապահովված համապատասխան ռեսուրսներով և կանոնակարգված համապատասխան փաստաթղթային հենքով
- ԵՊԼՀ-ի ՄԿԾ-ների համակազմում օտար լեզուներով դասավանդվող ՄԿԾ-ների առկայություն
- Օտարերկրյա սովորողների ներհոսքի աճ

Ռազմավարական խնդիր 1. Ապահովել ԵՊԼՀ-ի կողմից իրականացվող ՄԿԾ-ների բարելավումը և ոլորտային շրջանակի ընդլայնումը՝ ՀՀ ՈԱՇ-ին, աշխատաշուկայի արդի պահանջներին և միջազգայնորեն միասնական առարկայական չափանիշներին համապատասխան	Խնդրի իրագործման համար անհրաժեշտ գործողություններ	Իրականացվող գործողությունների վերջնարդյունքներ	Պատասխանատու	Կատարման ժամկետ
	1.1.1. ԵՊԼՀ մասնագիտական բոլոր ոլորտների համար մշակել որակավորումների շրջանակներ	1.1.1. ԵՊԼՀ-ի կողմից շնորհվող որակավորումների համադրելիություն ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչներին (համապատասխան փաթեթների առկայություն)	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ ՈԱԲ կենտրոն ՌԻԳԸ, ՌԻԽ	2019-2020

	<p>1.1.2. Վերանայել բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-ների մշակման, կազմակերպման և իրականացման նորմատիվային փաստաթղթերը</p>	<p>1.1.2. Ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման նորացված կանոնակարգային հենքի առկայություն</p>	<p>Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ</p> <p>Ուսումնական բաժին</p> <p>ՈՒԳԸ, ՈՒԽ</p>	<p>2019-2021</p>
	<p>1.1.3. Կատարել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ինստիտուցիոնալ գնահատում և գնահատման արդյունքներով վերանայել դրանց բովանդակությունը, կառուցվածքը և կրեդիտների հաշվարկման մեխանիզմները՝ համապատասխանեցնելով ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքները ՀՀ ՈԱԾ-ի բնութագրիչներին:</p>	<p>1.1.3. Որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական չափանիշներին համապատասխան ՄԿԾ-ների և փաթեթների առկայություն</p>	<p>Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ</p> <p>ԿՀ</p> <p>Կարիերայի կենտրոն</p> <p>ՈՒԽ, ՈՒԳԸ</p> <p>ՈԱԲ կենտրոն</p>	<p>2019-2021</p>
	<p>1.1.4. Մշակել և ներդնել նոր ՄԿԾ-ներ բակալավրիատում և մագիստրատուրայում՝ ըստ ոլորտների</p> <p>Կրթական գիտությունների և մանկավարժության ոլորտում</p> <ul style="list-style-type: none"> • Մասնագիտական մանկավարժություն ՄՄԿՈՒ համար • Կրթության գնահատում և թեստավորում (մագիստրատուրա) • Մանկավարժություն (օտար լեզուների ուսուցիչ) <ul style="list-style-type: none"> - չինարեն լեզու և 	<p>1.1.4. Նոր ՄԿԾ-ների առկայություն</p>	<p>Ուսումնական բաժին</p> <p>Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ</p> <p>Կոնֆուցիուսի ինստիտուտ</p> <p>ՈԱԲ կենտրոն</p> <p>Կարիերայի կենտրոն</p> <p>ՈՒԳԸ, ՈՒԽ</p>	<p>2019-2023</p>

	<p>գրականություն (բակալավրիատ, մագիստրատուրա) - հայերենը որպես օտար լեզու</p> <p>Լեզվաբանության ոլորտում</p> <ul style="list-style-type: none"> • Դասական բանասիրություն • Ոլորտային թարգմանություն (իրավական, ֆինանսական, ռազմական, SS, գրոսաշրջություն և այլն) (մագիստրատուրա) • Կորեերենի և չինարենի թարգմանիչ (մագիստրատուրա) • Կիրառական լեզվաբանություն/ համակարգչային լեզվաբանություն (բակալավրիատ և մագիստրատուրա) • Մայրենի և օտար լեզուների զուգադրական տիպաբանություն (անգլերեն-հայերեն, ֆրանսերեն-հայերեն, ռուսերեն-հայերեն և այլ լեզուների համադրություններ) (մագիստրատուրա) • Տարբեր լեզուներով համաժամանակյա 			
--	--	--	--	--

	<p>թարգմանչություն (մագիստրատուրա)</p> <p>Հասարակական գիտությունների ոլորտում</p> <ul style="list-style-type: none"> • Հանրային կառավարում (բակալավրիատ) • Կրթության կառավարում (մագիստրատուրա) • Մարդկային ռեսուրսների կառավարում (մագիստրատուրա) • Հանրային հաղորդակցման տեխնոլոգիաներ/ հանրային կապեր (բակալավրիատ) • Վարչական և գրասենյակային աշխատանք (բակալավրիատ) • Երկրագիտություն/տա- րածաշրջանագիտություն (մագիստրատուրա) <ul style="list-style-type: none"> - Ամերիկայի և Բրիտանիայի երկրագիտություն - Եվրոպագիտություն - Չինագիտություն • Տեղեկատվության կառավարում/Գրադարա- նագիտություն (մագիստրատուրա) 			
--	---	--	--	--

	Զբոսաշրջության և սերվիսի ոլորտում <ul style="list-style-type: none"> Միջոցառումների կազմակերպում և կառավարում (մագիստրատուրա) Զբոսաշրջություն/Զբոսավարում (բակալավրիատ) 			
	1.1.5. ՄԿԾ-ների մշակման և վերամշակման գործընթացներում բազմազանեցնել կամընտրական դասընթացները և մեծացնել դրանց թվաքանակն ու հատկացվող կրեդիտների համամասնությունը	1.1.5. ՄԿԾ-ներում կամընտրական դասընթացների ավելացված թվաքանակ	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ ՈԱԲ կենտրոն ՈՒԳԸ, ՈՒԽ	2019-2023
	1.1.6. Վերանայել պրակտիկաներին առնչվող կարգերը և գործընթացները, ներառյալ դրանց կազմակերպման ձևերը, տևողությունն ու բովանդակությունը՝ տարբերակելով ըստ ՄԿԾ-ների 1.1.7. Իրականացնել պրակտիկաների կազմակերպման մշտադիտարկում ու գնահատում	1.1.6. -1.1.7. Պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ պարբերական մշտադիտարկման և հարցումների արդյունքների վերլուծություն, պրակտիկաների նոր կարգերի առկայություն	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ ՈԱԲ կենտրոն ՈՒԳԸ, ՈՒԽ Իրավաբանական բաժին Կարիերայի կենտրոն	2019-2023
Ռազմավարական խնդիր 2. Բարելավել դասավանդման, ուսումնառության և	1.2.1. Իրականացնել ՊԴ կազմի շարունակական զարգացում մասնագիտական, S<S և այլ ուղղություններով	1.2.1. ՊԴ կազմի շարունակական մասնագիտական կատարելագործված մեխանիզմներ և գործընթացներ	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ	2019-2023

գնահատման գործընթացները	պարբերական վերապատրաստումների կազմակերպման և այլ ձևերով		ՀՇԿ բաժին	
	1.2.2. Մշակել և կիրառել դասավանդման խրախուսման, փոխանակման և տարածման ներհամալսարանական մեխանիզմներ, ընդարձակել ոլորտի առաջատար մասնագետների հրավիրման և դասախոսությունների կազմակերպման փորձը՝ նպաստելով ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը, նորագույն և նորարական մոտեցումների կիրառմանը	1.2.2 Դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացներում արդյունավետորեն կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաներ և մեթոդներ	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ ՀՇԿ բաժին ՈԱԲ կենտրոն ՈՒԽ, ՈՒԳԸ	2019-2023
	1.2.3. Մշակել և գործարկել ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքների գնահատման նոր մեթոդաբանություն և համապատասխան կանոնակարգեր՝ աստիճանաբար բազմազանեցնելով սովորողների ընթացիկ և ամփոփիչ գնահատման ձևերը	1.2.3.-1.2.4. Մշակված և կիրառվող գնահատման նոր մեթոդաբանություն, կանոնակարգեր և ձևեր, գնահատման մեթոդներից սովորողների բավարարվածության վերլուծություն	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ ՀՇԿ բաժին Իրավաբանական բաժին ՈԱԲ կենտրոն ՈՒԽ, ՈՒԳԸ	2019-2022
	1.2.4. Հրաժարվել վերարտադրողական տիպի աշխատանքների միջոցով գնահատումից, անցնել ստեղծագործական			

	<p>աշխատանքների միջոցով գնահատման՝ բարձրացնելով գնահատման օբյեկտիվությունը, թափանցիկությունն ու հիմնավորվածությունը և բարելավելով դրանց կիրառման մեխանիզմները</p>			
	<p>1.2.5. Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման միջազգային փորձը, ՄԿԾ-ներում ներդնել սովորողների հետազոտական ու նորարական կարողությունների զարգացմանը նպատակաուղղված դասընթացներ կրթական տարբեր մակարդակներում</p>	<p>1.2.5. Դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման սկզբունքների վրա հիմնված ՄԿԾ-ներ և ուսուցումը հետազոտության հետ փոխկապակցելու ընդլայնված պրակտիկաներ</p>	<p>Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ ՈԱԲ կենտրոն ՈԻԽ, ՈԻԳԸ</p>	<p>2019-2022</p>
	<p>1.2.6. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքներում, մագիստրոսական թեզերում և ատենախոսություններում գրագողությունը կանխելու մեթոդներ</p>	<p>1.2.6. Գիտական խորհրդին կից մշտական հիմունքներով գործող էթիկայի հանձնաժողովի հաշվետվություններ և կանոնագրքի առկայություն</p>	<p>Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Իրավաբանական բաժին ՈԱԲ կենտրոն ՈւԳԸ, ՈԻԽ</p>	<p>2019-2022</p>
	<p>1.2.7. Ակտիվացնել ԵՊԼՀ մեթոդական խորհուրդի գործունեությունը ՄԿԾ-ների հաստատման և վերանայման նպատակով</p>	<p>1.2.7. ՄԿԾ-ների փաթեթ, մեթոդական խորհրդի հաշվետվություններ</p>	<p>Ուսումնական բաժին Մեթոդական խորհուրդ</p>	

Ռազմավարական խնդիր 3. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը կրթական գործընթացում	1.3.1. Բարելավել ԵՊԼՀ-ում գործող էլեկտրոնային ուսուցման և սովորողների թեստավորման հարթակների ուսումնամեթոդական նյութերը և համալրել նոր նյութերով, միաժամանակ շահագործել նոր էլեկտրոնային համակարգ(եր)՝ ՄԿԾ-ների, ուսումնական պլանների ու մոդուլների, տարաբնույթ ուսումնական նյութերի, դասախոսությունների առցանց մատուցման և սովորողների գնահատման նպատակով	1.3.1. Բարելավված և ուսումնամեթոդական նոր նյութերով համալրված էլեկտրոնային ուսուցման և թեստավորման հարթակներ	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ ՏՀՏ բաժին ԷՌՈՒ բաժին ՈւԳԸ, ՈՒԽ	2020-2022
	1.3.2. Ձևավորել տեխնոլոգիական և մեթոդական անհրաժեշտ հենք՝ ՊԴ կազմի կողմից էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների մշակման և ուսումնական գործընթացում դրանց արդյունավետ կիրառման համար	1.3.2. ՊԴ կազմի կողմից էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների մշակման և ուսումնական գործընթացում արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ տեխնոլոգիաների և մեթոդական հենքի առկայություն	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ ՏՀՏ բաժին ԷՌՈՒ բաժին	2019-2022
	1.3.3. Գործարկել ԵՊԼՀ կառավարման տեղեկատվական ներքին համակարգը, իրականացնել ԵՊԼՀ վիճակագրական և այլ տվյալների պարբերական մուտքագրում, վերլուծություն և հրապարակում	1.3.3. Կառավարման տեղեկատվական համակարգի առկայություն, որի միջոցով իրականացվում է ԵՊԼՀ վիճակագրական և այլ տվյալների պարբերական մուտքագրում, վերլուծություն և հրապարակում	ՏՀՏ բաժին ԷՌՈՒ բաժին Հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներ	2019-2023
	1.3.4. ԵՊԼՀ-ն աստիճանաբար համալրել համակարգչային	1.3.4. Համակարգչային սարքավորումներով, կրթական	ՏՀՏ բաժին	2019-2023

	<p>սարքավորումներով, կրթական ռեսուրսներով և տեխնիկական այլ միջոցներով՝ բարելավելով համացանցային կապն ու ներքին ցանցը և ընդլայնելով տարբեր մասնաշենքերի ուսումնական ու այլ տարածքների համացանցային անլար կապով ծածկույթը</p>	<p>ռեսուրսներով և տեխնիկական այլ միջոցներով համալրվածության աճի ցուցանիշներ, բարելավված համացանցային կապ ու ներքին ցանց և համացանցային անլար կապով մասնաշենքերի, ուսումնական ու այլ տարածքների ընդլայնված ծածկույթ</p>	<p>ԷՌՈՒ բաժին Հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներ Գնումների բաժին</p>	
	<p>1.3.5. Մշակել և գործարկել ԵՊԼՀ նոր պաշտոնական կայքէջ՝ կիրառելով բուհի գործունեությունը արտահայտող ֆունկցիոնալ լուծումներ, ապահովել կայքի անխափան և անվտանգ սպասարկումը, շարունակական համալրումը նյութերով և դրանց թարմացումը</p>	<p>1.3.5. Անխափան գործող և շարունակապես համալրվող ԵՊԼՀ պաշտոնական նոր կայքէջ</p>	<p>S<S բաժին ԷՌՈՒ բաժին Հանրային կապերի և լրատվության բաժին Հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներ</p>	<p>2019-2023</p>
	<p>1.3.6. Մշակել և ներդնել ՊԴ կազմի գործունեության արդյունավետության գնահատման և խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման և ուսումնառության գործընթացներում էլեկտրոնային ռեսուրսների կիրառումը խթանելու համար</p>	<p>1.3.6. ՊԴ կազմի գործունեության արդյունավետության գնահատման համակարգի առկայություն և ուսումնական գործընթացում էլեկտրոնային ռեսուրսների կիրառության աճի ցուցանիշներ</p>	<p>Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Ֆինանսական վարչություն Անձնակազմի կառավարման և զարգացման վարչություն Իրավաբանական բաժին S<S բաժին ԷՌՈՒ բաժին</p>	<p>2019-2022</p>

	1.3.7. Կանոնակարգել և ընդլայնել հեռավար ուսուցմամբ իրականացվող հիմնական և լրացուցիչ դասընթացները	1.3.7. Համապատասխան կարգերի, դասընթացների առկայություն	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ ՀՇԿ բաժին Իրավաբանական բաժին ՏՀՏ բաժին ԷՌՈՒ բաժին	2019-2022
Ռազմավարական խնդիր 4. Բազմազանեցնել և ամրապնդել դպրոց-բուհ, դիմորդ-բուհ կապին ուղղված միջոցառումները	1.4.1. Կազմակերպել և իրականացնել նախապատրաստական դասընթացներ դպրոցների շրջանավարտների համար	1.4.1. Նախապատրաստական դասընթացների փաթեթի առկայություն	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ ՀՇԿ Կարիերայի կենտրոն	2019-2022
	1.4.2. Ստեղծել ժամկետների նկարագրությամբ ուղեցույցներ ուսանողների և դիմորդների համար՝ ՄԿԾ-ների, մուտքային և ելքային պահանջների, սովորողների իրավունքների ու պարտականությունների, գեղչային համակարգի, ուսանողական կյանքի, աշխատանքային ապագա հնարավորությունների մասին	1.4.2. Ուղեցույցների առկայություն	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Ուսումնական բաժին Հանրային կապերի և լրատվության բաժին Կարիերայի կենտրոն Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն	2019-2022
Ռազմավարական խնդիր 5. Ամրապնդել ԵՊԼՀ-ի՝ որպես համալսարանական	1.5.1. Մշակել համալսարանական շարունակական կրթության քաղաքականություն և	1.5.1-1.5.3. ԵՊԼՀ-ի համալսարանական շարունակական կրթության քաղաքականության և	ՀՇԿ բաժին Ուսումնական և գիտական	2019-2023

<p>շարունակական կրթություն տրամադրող կառույցի դերը ազգային և միջազգային մակարդակներում</p>	<p>ընթացակարգեր՝ ապահովելով ԵՊԼՀ-ի՝ կրթական ծրագրեր և կրթական ծառայություններ իրականացնող ստորաբաժանումների թիրախավորված մասնակցությունը շարունակական կրթության իրականացման գործընթացին</p> <p>1.5.2. Մշակել և իրականացնել շարունակական կրթությանը վերաբերող տարատեսակ և բազմաբնույթ դասընթացներ կրթության, կառավարման, օտար լեզուների ուսուցման, գրադարանավարության, հասարակական գիտություններում, սերվիսի և այլ ոլորտներում՝ ուղղված կրթության ոլորտի մասնակիցների և բնակչության տարբեր խմբերի կրթական կարիքների բավարարմանը</p> <p>1.5.3. Ձևավորել գործընկերային համակարգված կապեր շարունակական կրթության կազմակերպությունների և կենտրոնների հետ</p>	<p>ընթացակարգերի առկայություն, ԵՊԼՀ ստորաբաժանումների ակտիվ մասնակցություն շարունակական կրթության իրականացման գործընթացներին</p>	<p>ստորաբաժանումներ</p> <p>Իրավաբանական բաժին</p> <p>ԷՌՈՒ բաժին</p>	
--	---	--	---	--

ԲԱԺԻՆ 2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակներ

- Մշակել և ներդնել ԵՊՀ գիտահետազոտական գործունեությունը խթանող նորարարական մեխանիզմներ, տեխնոլոգիաներ և մեթոդներ՝ ստեղծելով գիտակրթական գերազանցության կենտրոն, արդյունավետորեն օգտագործելով բուհի գիտահետազոտական և նորարարական ներուժը, նպաստելով սովորողների գիտական և նորարարական ակտիվության ու ստեղծագործական նախաձեռնությունների զարգացմանը և ազգային մակարդակում գիտելիքահենք տնտեսության զարգացմանը
- Մշակել ԵՊՀ գիտահետազոտական գործունեության գերակա ուղղությունների, նպատակների, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների համալիր ծրագիր՝ միտված ԵՊՀ գիտակրթական գործունեության զարգացմանը և օտարերկրյա մրցունակ համալսարանների գիտահետազոտական գործունեության հետ համադրելիության և մրցունակության ապահովմանը
- Ապահովել ԵՊՀ գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը և միջազգային գիտակրթական համագործակցության համակողմանի զարգացումը՝ միտված բուհում գիտական և կրթական նորարարությունների խթանմանը
- Բարձրացնել ԵՊՀ հիմնարար և կիրառական հետազոտությունները կրթական գործընթացում ներդնելու գործընթացի արդյունավետությունը

Ռազմավարական նպատակների նախանշվող վերջնարդյունքներ

- ԵՊՀ գիտահետազոտական գործունեության գերակա ուղղությունների, նպատակների, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների համալիր ծրագիր
- ԵՊՀ գիտահետազոտական գործունեությունը խթանող նորարարական մեխանիզմներ, տեխնոլոգիաներ և մեթոդներ
- Գիտահետազոտական և նորարարական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման ցուցանիշներ
- Պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների գիտական և նորարարական ակտիվության ու ստեղծագործական նախաձեռնությունների զարգացման նախադրյալներ
- ԵՊՀ հիմնարար և կիրառական հետազոտությունները կրթական գործընթացում ներդնելու բարելավված մշակույթ
- ԵՊՀ միջազգային գիտակրթական համակողմանի համագործակցության զարգացման ցուցանիշներ

Ռազմավարական խնդիր	Խնդրի իրագործման համար անհրաժեշտ գործողություններ	Իրականացվող գործողությունների վերջնարդյունքներ	Պատասխանատու	Կատարման ժամկետ
Ռազմավարական խնդիր 1. Համապատասխանեցնել ԵՊԼՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը ՀՀ ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի բնութագրիչներին՝ շեշտադրելով հետազոտական բաղադրիչը	2.1.1. Լրամշակել և արդիականացնել բակալավրի կրթական ծրագրերն ու դրանց կազմակերպման ընթացակարգերը՝ դրանք մագիստրոսական կրթության հետազոտական բնույթին համապատասխանեցնելու նպատակով	2.1.1. Բակալավրի կրթական լրամշակված ծրագրեր՝ համապատասխանեցված մագիստրոսական կրթության հետազոտական բնույթին	Ուսումնական բաժին Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ	2019-2022
	2.1.2. Լրամշակել և արդիականացնել մագիստրոսի կրթական ծրագրերը՝ ապահովելով մագիստրատուրայում հետազոտական աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ	2.1.2. Մագիստրոսի լրամշակված կրթական ծրագրեր՝ համապատասխանեցված մագիստրոսական կրթության հետազոտական բնույթին	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ	2019-2022
	2.1.3. Մշակել հետազոտական աշխատանքների կատարման գործընթացները կանոնակարգող և խթանող ընթացակարգեր և գործիքակազմ	2.1.3. Հետազոտական աշխատանքների կատարումը կանոնակարգող և խթանող ընթացակարգերի և գործիքակազմի առկայություն	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ	2019-2021
Ռազմավարական խնդիր 2. Ապահովել ԵՊԼՀ հետբուհական կրթական ծրագրերի համապատասխանությունը ՀՀ ՈԱՇ-ի	2.2.1. Վերանայել հետբուհական կրթական ծրագրերը՝ գնահատելով ՀՀ աշխատաշուկայում հետբուհական կրթության առկա կարիքները և համապատասխանեցնելով	2.2.1-2.2.2. Ըստ թիրախային ոլորտների՝ հետբուհական կրթական արդիականացված ծրագրեր՝ ՀՀ ՈԱՇ-ի մակարդակի բնութագրիչներին ու		

համապատասխան մակարդակի բնութագրիչներին և աշխատաշուկայի պահանջներին	կրթական տվյալ ծրագրերը ՀՀ ՈԱՇ-ի 8-րդ մակարդակի բնութագրիչներին	աշխատաշուկայի պահանջներին համապատասխան	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ	2019-2020
	2.2.2 Ուսումնասիրել աշխատաշուկայում ԵՊԼՀ-ի ուղղվածություններին համապատասխան հետբուհական կրթություն ստացած շրջանավարտների պահանջարկը և հետբուհական կրթության շրջանավարտների զբաղվածության մակարդակը			2019-2020
	2.2.3. Համապատասխանեցնել ԵՊԼՀ-ի կողմից հրատարակվող գիտական հանդեսների և ժողովածուների որակը միջազգային շտեմարանների պահանջներին և կատարել անհրաժեշտ քայլեր այդ հանդեսները Սկոպուս (Scopus) և/կամ Վեբ ով Սայենս (Web of Science) շտեմարաններում ընդգրկելու նպատակով	2.2.3. ԵՊԼՀ-ի հրատարակած հանդեսների բարձրացված որակ՝ միջազգային շտեմարանների պահանջներին համապատասխան	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ	2019-2023
	2.2.4. Մեծացնել միջազգային շտեմարաններում ընդգրկված հանդեսներում ԵՊԼՀ ՊԴ կազմի կողմից հրատարակվող հոդվածների թվաքանակը	2.2.4. Միջազգային շտեմարաններում ընդգրկված հանդեսներում ԵՊԼՀ ՊԴ կազմի կողմից հրատարակված հոդվածների թվաքանակի աճ	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ	2019-2023

Ռազմավարական խնդիր3. Մշակել և ներդնել գիտական արտադրանքի և ծառայությունների արդյունավետության գնահատման համակարգ՝ ապահովելու գիտական արդյունքների չափելիությունը	2.3.1. Մշակել ԵՊԼՀ-ի ՊԴ կազմի, ամբիոնների, ԳՈՒԿ-երի գիտական գործունեության արդյունքների գնահատում գիտաչափական մեխանիզմներով ու գործիքներով	2.3.1. Գիտաչափական մեխանիզմների և գործիքների կիրառում, գիտական արդյունքների վերաբերյալ գիտաչափական վերլուծություն	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Գիտության բաժին ՈԱԲ կենտրոն	
	2.3.2. Մշակել կրթական նորարարությունների բնագավառում գիտական հետազոտություններին և նորարարական մշակումներին ուղղված գործընթացների և դրանց արդյունքների առևտրայնացման մեխանիզմներ	2.3.2. Մեխանիզմների կիրառում և արդյունավետության գնահատում	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Գիտության բաժին	
Ռազմավարական խնդիր4. Մեծացնել և բազմազանեցնել գիտահետազոտական ծրագրերի թվաքանակը՝ ավելացնելով դրանց ֆինանսավորման ծավալները և բազմազանեցնելով ֆինանսական ներհոսքի աղբյուրները	2.4.1. Ըստ թիրախային ոլորտների՝ պարբերաբար մշակել գիտահետազոտական ծրագրեր՝ դրամաշնորհային ֆինանսավորում ապահովող ազգային և միջազգային մրցույթներին ներկայացնելու նպատակով	2.4.1-2.4.2. Գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերի թվաքանակի աճ	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Արտաքին կապերի և միջազգայնացման վարչություն ԳՈւ կենտրոններ	2019-2022
	2.4.2 Մշակել գիտահետազոտական նոր ծրագրեր՝ ՀՀ ԿԳՆ Գիտության կոմիտե ներկայացնելու և ֆինանսավորում ստանալու նպատակով		Գիտության բաժին	2019-2023
	2.4.3. Ստեղծել լեզվական և կրթական տեխնոլոգիաների գերազանցության կենտրոն՝ զարգացնելով կիրառական		2.4.3. Հիմնադրված գիտակրթական գերազանցության կենտրոն, թվային ենթակառուցվածքներում հայերենի լիարժեք գործառույթյան հիմքերի	

	լեզվաբանության և կրթական գիտությունների ոլորտներում հետազոտական ներուժը և միջոլորտային մասնագիտություններով տեխնոլոգիահենք կրթությունը	ապահովմանն ուղղված թվային և վեբ ռեսուրսների, գնահատման ու թեստավորման գործիքակազմի ստեղծում, դրանց ուղղված հետազոտությունների իրականացում		
Ռազմավարական խնդիր5. Արտահանել գիտական արդյունքը ներքին և արտաքին շուկաներ՝ նպաստելով ԵՊԼՀ-ի ինտեգրմանը եվրոպական և հետազոտական այլ տարածքներ	2.5.1. Բարձրացնել ԵՊԼՀ գիտական պարբերականների, Բանբերների, ժողովածուների, հանդեսների վարկանիշը՝ ներգրավելով խմբագրական կոլեգիաներում ԵՊԼՀ մասնագիտական ոլորտներից փորձառու ներկայացուցիչների Հայաստանից և արտերկրից	2.5.1-2.5.4. ԵՊԼՀ գիտական պարբերականների, ժողովածուների և հանդեսների վարկանիշի աճ, դրանցում գրախոսված հոդվածների ներառում, գրախոսվող ազգային և միջազգային գիտական պարբերականներում ԵՊԼՀ ՊԴ կազմի կողմից պատրաստված հոդվածների թվաքանակի ավելացում	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ	2019-2022
	2.5.2. Ապահովել ԵՊԼՀ գիտական պարբերականներում, ժողովածուներում և հանդեսներում ընդգրկվող հոդվածների գործընկերային գրախոսում		Արտաքին կապերի և միջազգայնացման վարչություն	2019-2022
	2.5.3. Ստեղծել հրատարակչական խորհուրդ ԵՊԼՀ-ի գիտամեթոդական և ուսումնամեթոդական աշխատանքները քննարկելու և տպագրության երաշխավորելու համար		2019-2022	

	2.5.4. Մշակել գրախոսվող ազգային և միջազգային գիտական պարբերականներում, հանդեսներում, ամսագրերում ԵՊԼՀ ՊԴ կազմի հետազոտությունների հրատարակումը խթանող մեխանիզմներ			2019-2022
Ռազմավարական խնդիր6. Նպաստել բրյուսովագիտության զարգացմանը՝ ապահովելով ԵՊԼՀ-ի բրյուսովյան ժառանգության պահպանումը	2.6.1. Պարբերաբար կազմակերպել «Բրյուսովյան ընթերցումներ» խորագրով գիտաժողովներ և հրատարակել նյութերի ժողովածուները	2.6.1.-2.6.2. Պարբերաբար կազմակերպվող «Բրյուսովյան ընթերցումներ» խորագրով գիտաժողովներ և գիտական նյութերի հրատարակված ժողովածուներ	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ	2019-2023
	2.6.2. Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ «Բրյուսովյան ընթերցումներ» խորագրով գիտական նյութերի ժողովածուները ԲՈԿ-ի գիտական հրատարակությունների ցանկում, իսկ դրանց թվային տարբերակները՝ EBSCO շտեմարանի «Humanities» հավաքածուի ցանկում ընդգրկելու ուղղությամբ		Գրադարան Գիտության բաժին	
	2.6.3. Շարունակաբար թվայնացնել Վ.Բրյուսովի թանգարանի նյութերը և ապահովել դրանց ու Բրյուսովյան գիտական կենտրոնի գրքային ֆոնդերի պահպանումը՝ ստեղծելով	2.6.3. Վ.Բրյուսովի թանգարանի՝ շարունակաբար թվայնացվող և համալրվող նյութերի թվային պահոցի առկայություն	Գրադարան Բրյուսովյան գիտական կենտրոն	2019-2023

	գրքային ֆոնդերի թվային պահոց			
	2.6.4. Ընդլայնել Վ.Բրյուսովի թանգարանի թվային հավաքածուները Google Cultural Institute-ի հետ համագործակցության շրջանակներում՝ ապահովելով Բրյուսովյան գիտական կենտրոնի նյութերի հասանելիությունը գիտական հանրությանը	2.6.4. Գիտական հանրության համար Բրյուսովյան գիտական կենտրոնի նյութերի բաց հասանելիություն	Գրադարան Գիտության բաժին Բրյուսովյան գիտական կենտրոն	2019-2023
	2.6.5. Շարունակաբար համալրել Բրյուսովյան գիտական կենտրոնի պաշտոնական կայքը	2.6.5. Բրյուսովյան գիտական կենտրոնի՝ բարելավված և մշտապես համալրվող եռալեզու պաշտոնական կայքի առկայություն	Բրյուսովյան գիտական կենտրոն Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ	2019-2023

ԲԱԺԻՆ 3. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ռազմավարական նպատակներ

- Ապահովել ԵՊԼՀ գրադարանային ռեսուրսների շարունակական արդիականացումը և արդյունավետ օգտագործումը
- Զարգացնել ԵՊԼՀ գրադարանի ենթակառուցվածքը՝ միտված ժամանակակից միջազգային պահանջներին և մասնագիտական չափանիշների համապատասխանեցմանը

Ռազմավարական նպատակների նախանշվող վերջնարդյունքներ

- ԵՊԼՀ գրադարանի էլեկտրոնային կառավարման համակարգի առկայություն
- Ոլորտային գիտական գրականության և տեղեկատվության կառավարման արդյունավետ համակարգի առկայություն
- Գիտական թվային պահոց և թվային գրադարան՝ ազատ հասանելիությամբ
- Գրավիչ ու հարմարավետ պայմաններով գրադարանային միջավայր

Ռազմավարական խնդիր 1.	Խնդրի իրագործման համար անհրաժեշտ գործողություններ	Իրականացվող գործողությունների վերջնարդյունքներ	Պատասխանատու	Կատարման ժամկետ
Ապահովել տեղեկատվության և ժամանակակից գրադարանային ծառայությունների մատչելիություն՝ նպաստելով ԵՊԼՀ կրթական և գիտահետազոտական գործունեության զարգացմանը	3.1.1. Իրականացնել ԵՊԼՀ գրադարանի գրքային ֆոնդերի և տեղեկատվական ռեսուրսների առկա վիճակի ուսումնասիրություն և բացահայտել կարիքները, ինչպես նաև կատարել համեմատական վերլուծություններ առաջատար գրադարանների հետ՝ լավագույն փորձը վերհանելու և ԵՊԼՀ գրադարանի բարելավման ուղիներ նախանշելու նպատակով	3.1.1. ԵՊԼՀ գրադարանի գրքային ֆոնդերի և տեղեկատվական ռեսուրսների առկա վիճակի ու կարիքների վերլուծության, ինչպես նաև առաջատար գրադարանների փորձի ուսումնասիրության վերլուծություններ	Գրադարան	2019-2023
	3.1.2. Մշակել գրադարանի հավաքածուների ձևավորման հայեցակարգ և համաձայն վերջինիս՝ ձևավորել հավաքածուները	3.1.2. Գրադարանի հավաքածուների ձևավորման հայեցակարգ և վերջինիս համաձայն ձևավորված հավաքածուներ	Գրադարան	

<p>3.1.3. Ընդլայնել գրադարանի գրքային ֆոնդերը և էլեկտրոնային ռեսուրսների շտեմարանները՝ համալրելով գրադարանի ռեսուրսները Հայաստանում և արտերկրում հրատարակված տպագիր և էլեկտրոնային նյութերով</p>	<p>3.1.3. Շարունակական համալրվող գրքային ֆոնդեր և էլեկտրոնային ռեսուրսների շտեմարանների առկայություն</p>	<p>Գրադարան</p>	<p>2019-2023</p>
<p>3.1.4. Ուսումնասիրել գրքերի, դասագրքերի և տեսաձայնային նյութերի թվայնացման ձևաչափերը և կատարել համապատասխան ձևաչափերի ընտրություն</p>	<p>3.1.4. Գրքերի թվայնացման ձևաչափերի վերաբերյալ ուսումնասիրության հաշվետվություն և ԵՊՀ պահանջներին համապատասխանող ընտրված ձևաչափ</p>	<p>Գրադարան</p>	<p>2019-2020</p>
<p>3.1.5. Մշակել գրադարանային ֆոնդերի, դասագրքերի և տեսաձայնային նյութերի թվայնացման և արխիվացման ձևաչափեր ու թվայնացված նյութերի օգտագործման կանոնակարգ և ընդլայնել դրանց թվայնացման և արխիվացման աշխատանքները</p>	<p>3.1.5. Գրադարանային ֆոնդերի, դասագրքերի և տեսաձայնային նյութերի թվայնացման և արխիվացման ձևաչափերի ու թվայնացված նյութերի օգտագործման կանոնակարգի առկայություն, թվայնացման ու արխիվացման շարունակական գործընթացների վերաբերյալ հաշվետվություններ</p>	<p>Գրադարան</p>	<p>2019-2022</p>
<p>3.1.6. Ստեղծել ԵՊՀ թվային գրադարան՝ ապահովելով տեխնիկական անվտանգությունը՝ բարձրացնելով թվային գրադարանի հասանելիությունը օգտվողների համար</p>	<p>3.1.6. ԵՊՀ թվային գրադարան՝ օգտվողների համար բարձր հասանելիությամբ</p>	<p>Գրադարան S<S բաժին</p>	<p>2019-2022</p>
<p>3.1.7. Շարունակաբար համալրել ԵՊՀ էլեկտրոնային</p>	<p>3.1.7. ԵՊՀ գրադարանի էլեկտրոնային բարելավված</p>	<p>Գրադարան</p>	<p>2019-2022</p>

	գրացուցակները՝ ընդլայնելով գրադարանային գործընթացների էլեկտրոնային կառավարման համակարգի (KOHA) մոդուլների կիրառման գործընթացները	գործընթացներ		
	3.1.8. Սերտացնել գրադարանի և ԵՊԼՀ ստորաբաժանումների փոխհամագործակցային կապը՝ գրադարանի ֆոնդերի համալրման, ՊԴ կազմի և սովորողների համար թեմատիկ շտեմարանների կազմման, համատեղ միջոցառումների կազմակերպման միջոցով	3.1.8. ԵՊԼՀ գրադարանի և ԵՊԼՀ այլ ստորաբաժանումների համագործակցության ընդլայնում տարբեր մակարդակներում	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Գրադարան	2019-2023
	3.1.9. Պարբերաբար համալրել ԵՊԼՀ գրադարանի նյութատեխնիկական բազան՝ էլեկտրոնային գրքերի և տեղեկատվական ռեսուրսների հասանելիությունն ապահովելու նպատակով	3.1.9. ԵՊԼՀ գրադարանի նյութատեխնիկական համալրված բազա	Գրադարան	2019-2023
Ռազմավարական խնդիր 2. Ապահովել ոլորտային գիտական տեղեկատվության էլեկտրոնային կառավարումը	3.2.1. Մշակել ԵՊԼՀ գիտական թվային պահոցի ստեղծման և շահագործման հայեցակարգ, ձեռք բերել ծրագրային համապատասխան փաթեթ և իրականացնել աշխատանքներ գիտական թվային պահոցի ստեղծման ուղղությամբ	3.2.1. Շարունակաբար բարելավվող գիտական թվային պահոց	Գրադարան	2019-2023
	3.2.2. Մշակել «Տեղեկատվական գրագիտություն» և «Ետագրտական հմտություններ»	3.2.2.-3.2.3. Մշակված և պարբերաբար իրականացվող վերապատրաստման դասընթացներ ԵՊԼՀ գրադարանավարների,	Գրադարան	2019-2023

	<p>վերապատրաստման դասընթացները ԵՊԼՀ գրադարանավարների, դասավանդողների, հետազոտողների և սովորողների համար</p> <p>3.2.3. Կազմակերպել և իրականացնել վերապատրաստման դասընթացներ ժամանակակից գիտաչափական մեթոդների, տեխնոլոգիաների, ծրագրերի, շտեմարանների կիրառմամբ՝ ոլորտային գիտական տեղեկատվությունը հասանելի և տեսանելի դարձնելու նպատակով</p>	<p>դասավանդողների, հետազոտողների և սովորողների համար</p>	<p>ՀՇԿ բաժին</p>	
--	---	--	------------------	--

ԲԱԺԻՆ 4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Ռազմավարական նպատակներ

- Խթանել սովորողների ակտիվ ներգրավվածությունը ԵՊԼՀ գործունեության տարբեր ոլորտների զարգացման և որոշումների կայացման գործընթացներում
- Բարելավել սովորողների մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի տեղավորման մեխանիզմները
- Բազմազանեցնել սովորողների հետ տարվող աշխատանքը, սովորողների աջակցության մեխանիզմներն ու ձևերը և բարելավել մատուցվող ծառայությունների որակը
- Խթանել սովորողների հասարակական գործունեությունը և նախաձեռնությունները

Ռազմավարական նպատակների նախանշվող վերջնարդյունքներ

- ԵՊԼՀ որոշումների կայացման գործընթացներում սովորողների ակտիվ և արդյունավետ մասնակցություն
- Սովորողների բազմազանեցված և արտալսարանային ակտիվ կյանք
- Սովորողների բարձր իրազեկվածության ցուցանիշներ բուհի բոլոր գործընթացներից
- Սովորողների կրթական և սոցիալական աջակցության բարելավված և բազմազանեցված մեխանիզմներ և ծառայություններ
- Սովորողների և հասարակության հետ ամրապնդված կապ և քաղաքացիական ակտիվ վարքագիծ
- Սովորողների քաղաքացիական և հասարակական մասնակցության բարձրացում

Ռազմավարական խնդիր 1.	Խնդրի իրագործման համար անհրաժեշտ գործողություններ	Իրականացվող գործողությունների վերջնարդյունքներ	Պատասխանատու	Կատարման ժամկետ
Ապահովել սովորողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը ԵՊԼՀ կառավարման և գործունեության տարբեր ոլորտների զարգացման գործընթացներում՝ նպաստելով և աջակցելով ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի գործունեությանը	4.1.1. Մշակել և վերանայել սովորողների մասնակցությանն առնչվող կարգերն ու կանոնակարգերը՝ սահմանելով որոշումների կայացման գործընթացներում նրանց մասնակցության մեխանիզմներն ու չափանիշները:	4.1.1. -4.1.2. Սովորողների մասնակցությանն առնչվող վերանայված կարգեր և կանոնակարգեր, ԵՊԼՀ կառավարման և գործունեության տարբեր ոլորտների զարգացման գործընթացներում սովորողների արդյունավետ մասնակցություն	Ուսումնական բաժին Իրավաբանական բաժին ՈՒԽ, ՈՒԳԸ	2019-2023
	4.1.2. Ներգրավել սովորողներին կրթության բովանդակության			

	<p>ձևավորման, ՄԿԾ-ների վերանայման ու մշակման, կրթության որակի ապահովման և ՊԴ կազմի գործունեության արդյունավետության գնահատման և այլ գործառնություններում</p>			
	<p>4.1.3. Ընդլայնել սովորողներին մատուցվող խորհրդատվական ծառայությունների համակարգը՝ ներառյալ համալսարանական կյանքին հարմարվելու, անհատական խնդիրները հաղթահարելու և այլ ուղղություններով, ինչպես նաև ուսման վարձերի զեղչերի, շարժունության, փոխանակման, կրթաթոշակային տարբեր ծրագրերի, նպաստավոր պայմաններով ուսանողական վարկերի ստացման հնարավորությունների մասին:</p>	<p>4.1.3. Սովորողներին մատուցվող խորհրդատվական ծառայությունների գործունե համակարգի առկայություն</p>	<p>Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ</p> <p>Կարիերայի կենտրոն</p> <p>Ուսումնական բաժին</p> <p>ՈՒԽՍ, ՈՒԳԸ</p>	<p>2019-2023</p>
	<p>4.1.4. Զարգացնել և բազմազանեցնել սովորողներին տրամադրվող ակադեմիական աջակցության և կրթական լրացուցիչ ծառայությունների մեխանիզմները՝ նրանց ուսումնական առաջընթացը բարելավելու նպատակով: Այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> • ելնելով սովորողների հետաքրքրություններից և կարիքներից՝ կազմակերպել դասախոսություններ ու հանդիպումներ ոլորտի մասնագետների, ինչպես նաև տարբեր ոլորտների գործիչների հետ, • սովորողների կրթական կարիքներից ելնելով՝ 	<p>4.1.4. Սովորողներին տրամադրվող ակադեմիական աջակցության և կրթական լրացուցիչ ծառայությունների ընդլայնված և կատարելագործված համակարգ</p>	<p>Կարիերայի կենտրոն</p> <p>Ուսումնական բաժին</p> <p>ՈՒԽՍ, ՈՒԳԸ</p>	<p>2019-2022</p>

	<p>իրականացնել անհատականացված ուսումնական ծրագրեր, ներառյալ հատուկ դասընթացներ կամ հանդիպումներ,</p> <ul style="list-style-type: none"> • զարգացնել կրթական ռեսուրսներից օգտվելու հմտությունները, • սահմանել ԵՊԼՀ անվանական կրթաթոշակներ՝ լավագույն առաջադիմությամբ սովորողների համար, • տրամադրել ուսման վճարի մասնակի զեղչեր բարձր առաջադիմությամբ սովորողներին: 			
<p>Ռազմավարական խնդիր 2.</p> <p>Նպաստել սովորողների արտալսարանային կյանքի և հետազոտական գործունեության ակտիվացմանը</p>	<p>4.2.1. Ուսումնասիրել և վեր հանել սովորողների կրթագիտական հետաքրքրությունները, ստեղծել նոր և տարատեսակ ուսանողական խմբակներ, համույթներ, ակումբներ, ակտիվացնել գործող ակումբների, խմբակների և ստուդիաների աշխատանքները և ընդլայնել սովորողների ներգրավվածությունը դրանց աշխատանքներում</p>	<p>4.2.1. Սովորողների բազմազանեցված և արտալսարանային ակտիվ կյանք</p>	<p>Կարիերայի կենտրոն</p> <p>Ուսումնական բաժին</p> <p>ՈՒԽՍ, ՈՒԳԸ</p>	<p>2019-2023</p>
	<p>4.2.2. Կազմակերպել և իրականացնել տարաբնույթ կրթագիտական, մշակութային, սպորտային, հասարակական ուղղվածության ծրագրեր և միջոցառումներ սովորողների համար</p>	<p>4.2.2. Սովորողների համար իրականացված տարաբնույթ ծրագրեր և միջոցառումներ, ուսնողների մասնագիտական, ստեղծագործական և այլ հմտությունների աճ</p>		

	4.2.3. Աջակցել ԵՊԼՀ ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի ակտիվ գործունեությանը՝ տրամադրելով ֆինանսական, նյութական և կազմակերպչական ռեսուրսներ	4.2.3. Սովորողների ակտիվ և արդյունավետ գործունեություն, զարգացած հետազոտական և գիտական հենք սովորողների շրջանում		
Ռազմավարական խնդիր 3. Բարձրացնել սովորողների իրազեկվածության մակարդակ	4.3.1. Մշակել և կազմակերպել սովորողներին իրազեկելու տարատեսակ միջոցառումներ՝ ներառյալ բուհի վահանակների և ցուցարկիչների միջոցով տեղեկատվության տարածման հոսք	4.3.1-4.3.2. Սովորողների բարձր իրազեկվածություն և տեղեկատվության լիարժեք հասանելիություն	Հանրային կապերի և լրատվության բաժին ՈՒԽ, ՈՒԳԸ	2019-2022
	4.3.2. Ստեղծել ԵՊԼՀ սովորողների և ՊԴ ու վարչական կազմերի փոխհամագործակցության, հետադարձ կապի պահպանման և անհրաժեշտ տեղեկատվության տարածման էլեկտրոնային հարթակ			
Ռազմավարական խնդիր 4. Բարելավել և բազմազանեցնել սովորողների սոցիալական աջակցության մեխանիզմները և ծառայությունները	4.4.1. Մշակել և իրականացնել ծրագրեր սոցիալապես անապահով և խոցելի խմբերի սովորողներին աջակցելու համար, տրամադրել սոցիալական աջակցության տարաբնույթ ծառայություններ՝ ապահովելով դրանց հասցեականությունը	4.4.1-4.4.4. Սովորողների սոցիալական աջակցության բարելավված և բազմազանեցված մեխանիզմներ և ծառայություններ	Ուսումնական բաժին Ֆինանսական վարչություն ՈՒԽ, ՈՒԳԸ Կարիերայի կենտրոն	2019-2023
	4.4.2. Իրականացնել աշխատանքներ համապատասխան հիմնադրամների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ թիրախային կարիքներ ունեցող սովորողներին աջակցելու ուղղությամբ			
	4.4.3. Բարելավել զեղչերի տրամադրման գործընթացը և			

	<p>ընդլայնել ԵՊԼՀ-ի կողմից ուսման վճարի մասնակի զեղչ ստացող սոցիալապես անապահով և խոցելի խմբերից սովորողների թիվը մասնավորապես մասնավոր ներդրումներից ստացվող միջոցների հաշվին</p>			
	<p>4.4.4.Սովորողների համար ստեղծել ԵՊԼՀ-ում, գործընկեր կամ գործատու կազմակերպություններում իրենց մասնագիտությամբ աշխատելու հնարավորություններ՝ որպես պրակտիկաների բաղադրիչ</p>		<p>Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ</p> <p>Կարիերայի կենտրոն</p> <p>ՈՒԽ, ՈՒԳԸ</p>	<p>2019-2023</p>
	<p>4.4.5. Ստեղծել առանձնահատուկ պայմաններ ուսումնական գործընթացը հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար մատչելի դարձնելու նպատակով՝ հիմնվելով նախապես վեր հանված խնդիրներին լուծումներ առաջադրելու վրա</p>	<p>4.4.5. Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ներգրավվածության աճ</p>	<p>Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ</p> <p>Ֆինանսական վարչություն</p> <p>ՈՒԽ</p>	<p>2019-2023</p>
<p>Ռազմավարական խնդիր 5.</p> <p>Էսթիմատել սովորողների հասարակական ակտիվությունը՝ միտված ներհամալսարանական և արտահամալսարանական հասարակական գործընթացներին նրանց մասնակցության բարձրացմանը, հասարակության հետ կապի ամրապնդմանը</p>	<p>4.5.1. Ուսանողական, երիտասարդական տարբեր կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, այլ բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում իրականացնել թեմատիկ տարբեր միջոցառումներ</p>	<p>4.5.1-4.5.2. ԵՊԼՀ սովորողների և հասարակության միջև ամրապնդված կապ և միջոցառումների թվաքանակի աճ</p>	<p>Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ</p> <p>Կարիերայի կենտրոն</p> <p>ՈՒԽ, ՈՒԳԸ</p>	<p>2019-2023</p>

	<p>4.5.2. Ընդլայնել ԵՊԼՀ սովորողների մասնակցությունը միջբուհական, համայնքային, պետական և համապետական ծրագրերին, նախաձեռություններին և միջոցառումներին</p>			
	<p>4.5.3. Մշակել և կիրառել սովորողների հասարակական ակտիվության չափման և խրախուսման մեխանիզմներ</p>	<p>4.5.3. Հասարակական ակտիվություն դրսևորող սովորողների թվաքանակի աճ</p>		
	<p>4.5.4. Մշակել սովորողների կամավորության սկզբունքով աշխատանքի գործընթացը խրախուսող և համակարգող ընթացակարգեր, օրինակ՝ տրամադրել կամավորության վկայականներ, որոնք օգտակար կլինեն հետագայում աշխատանքի տեղավորվելու համար</p>	<p>4.5.4. Մշակված և կիրառվող ընթացակարգեր</p>		

ԲԱԺԻՆ 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակներ

- Բարելավել ԵՊԼՀ-ի ֆինանսական կայունությունը՝ աստիճանաբար ավելացնելով ու բազմազանեցնելով ֆինանսական հոսքերը պետական և ոչ պետական աղբյուրներից, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից զոյացող եկամուտները
- Ապահովել ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարումը և նպատակային բաշխումը՝ զարգացնելով ֆինանսական պլանավորման համակարգը կառուցվածքային ստորաբաժանումների մակարդակով
- Նորարարությունների խթանման նպատակով ձևավորել անհրաժեշտ գործառույթներ և մշակել ֆինանսավորման մեխանիզմներ

Ռազմավարական նպատակների նախանշվող վերջնարդյունքներ

- ԵՊԼՀ -ի բարելավված ֆինանսական կայունություն, ընդլայնված և բազմազանեցված ֆինանսական հոսքեր
- Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման և նպատակային բաշխման մեխանիզմներ
- Նորարարությունների խթանման նպատակով ձևավորված գործառույթներ և ֆինանսավորման մեխանիզմներ

Ռազմավարական խնդիր	Խնդրի իրագործման համար անհրաժեշտ գործողություններ	Իրականացվող գործողությունների վերջնարդյունքներ	Պատասխանատու	Կատարման ժամկետ
Ռազմավարական խնդիր 1. Բազմազանեցնել ԵՊԼՀ-ի ֆինանսական հոսքերի աղբյուրները և մեծացնել պետական ու ոչ պետական աղբյուրներից ներգրավվող ֆինանսական և նյութական ռեսուրսները	5.1.1. Իրականացնել միջոցառումներ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների ծավալների աստիճանական ավելացման ուղղությամբ՝ մեծացնելով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը և մոտեցնելով մեկ սովորողի հաշվով ԵՊԼՀ-ին հատկացվող գումարի չափը միջին պետական ցուցանիշին, ինչպես նաև ավելացնելով գիտական թեմաների ֆինանսավորումը	5.1.1. Պետական բյուջեից ԵՊԼՀ-ին հատկացվող ֆինանսական միջոցների ծավալի աստիճանական աճ	Ֆինանսական վարչություն Ուսումնական բաժին	2019-2023
	5.1.2. Բազմազանեցնել ֆինանսական հոսքերի աղբյուրները և ներգրավել լրացուցիչ միջոցներ՝ ներառյալ ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտները, դրամաշնորհային	5.1.2. Բազմազանեցված և ավելացված ֆինանսական հոսքեր	Ֆինանսական վարչություն Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն	2019-2023

	ծրագրերը և այլն		ՀՇԿ բաժին Շենք, շինությունների և տնտեսվարման վարչություն	
	5.1.3. Մշակել կրթական նորարարությունների խթանման ծրագրեր և դիմել միջազգային, հասարակական ու այլ կազմակերպությունների դրանք ֆինանսավորելու առաջարկով, այդ թվում՝ Նորարարությունների մրցակցային հիմնադրամի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհների մրցույթին մասնակցելու նպատակով	5.1.3. Կրթական նորարարությունների խթանմանն ուղղված ծրագրեր, որոնք ներկայացված են համապատասխան կազմակերպություններին	Ֆինանսական վարչություն ԵՊԼՀ համապատասխան ստորաբաժանումներ	2019-2023
	5.1.4. Խթանել ԵՊԼՀ և գործարար միջավայրի համագործակցությունը, կատարել հետևողական աշխատանք մասնավոր ոլորտի կազմակերպություններին, գործատուներին ուսումնական և այլ գործընթացներում ներգրավելու և լրացուցիչ մարդկային, ֆինանսական ու այլ ռեսուրսներ ներգրավելու ուղղությամբ	5.1.4. ԵՊԼՀ և գործարար միջավայրի ամրապնդված համագործակցություն	Ֆինանսական վարչություն Կարիերայի կենտրոն ԵՊԼՀ համապատասխան ստորաբաժանումներ	2019-2022
	5.1.5. Իրականացնել միջոցառումներ և ծրագրեր ԵՊԼՀ շրջանավարտների աջակցությամբ՝ ներգրավելով լրացուցիչ մարդկային, ֆինանսական և նյութական միջոցներ	5.1.5. ԵՊԼՀ շրջանավարտների հետ ամրապնդված կապ և կայուն համագործակցություն	Ֆինանսական վարչություն Կարիերայի կենտրոն	2019-2023
	5.1.6. Ֆինանսական կայունությունն ամրապնդելու նպատակով մշակել և վարել ԵՊԼՀ անձեռնմխելի ֆոնդի շարունակական համալրման ակտիվ քաղաքականություն, խթանել	5.1.6. ԵՊԼՀ-ի՝ շարունակաբար համալրվող անձեռնմխելի ֆոնդ	Ֆինանսական վարչություն Կարիերայի կենտրոն	2019-2023

	շրջանավարտների կամավոր ներդրումների կատարումը անձեռնմխելի ֆոնդին			
	5.1.7. Ընդլայնել ձեռնարկատիրական գործունեության տեսակները և ձևերը, մասնավորապես՝ հասարակությանը լրացուցիչ շարունակական կրթական ծրագրերի ու տարբեր ծառայությունների մատուցման միջոցով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից ԵՊԼՀ տնտեսական միավորների արդյունավետ գործառնությունն ապահովելու նպատակով	5.1.7. Ձեռնարկատիրական ընդլայնված գործունեության տեսակներ, նոր հիմնադրված տնտեսական ընկերություններ	Ֆինանսական վարչություն ՀՇԿ բաժին Շենք, շինությունների և տնտեսվարման վարչություն	2019-2023
	5.1.8. Զարգացնել պայմանագրային հարաբերությունները պատվիրատու կազմակերպությունների և գերատեսչությունների հետ՝ սեփական կադրերի պատրաստման և մասնագիտական զարգացման նպատակով	5.1.8. Լրացուցիչ ֆինանսական հոսքերի ապահովում	Ֆինանսական վարչություն ԵՊԼՀ համապատասխան ստորաբաժանումներ	2019-2022
Ռազմավարական խնդիր 2. Բարելավել ԵՊԼՀ ֆինանսական կառավարման համակարգը	5.2.1. Նպաստել ԵՊԼՀ կառուցվածքային ստորաբաժանումների նախաձեռնողականության դրսևորմանը ինքնուրույն ֆինանսական միջոցների ձևավորման գործընթացներում	5.2.1. ԵՊԼՀ արտաբյուջետային միջոցների աճ կառուցվածքային ստորաբաժանումների նախաձեռնությունների միջոցով	Ֆինանսական վարչություն ԵՊԼՀ համապատասխան ստորաբաժանումներ	2020-2022
	5.2.2. Մշակել և ներդնել ԵՊԼՀ ծախսերի և եկամուտների շարունակական վերլուծության մեխանիզմներ	5.2.2. ԵՊԼՀ ծախսերի և եկամուտների շարունակական վերլուծության գործող մեխանիզմներ	Ֆինանսական վարչություն ԵՊԼՀ համապատասխան ստորաբաժանումներ	2019-2022

	5.2.3. Չարգացնել կարճաժամկետ (տարեկան), միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսական պլանավորման գործընթացները	5.2.3. Տարեկան, միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորման պլանավորման գործող մեխանիզմներ	Ֆինանսական վարչություն ԵՊԼՀ համապատասխան ստորաբաժանումներ	2019-2022
	5.2.4. Աստիճանական անցում կատարել բյուջետավորման ծրագրային ձևաչափին կամ «ելքային» բյուջետավորմանը	5.2.4. Ծրագրային ձևաչափով կազմված բյուջե	Ֆինանսական վարչություն ԵՊԼՀ համապատասխան ստորաբաժանումներ	2019-2022

ԲԱԺԻՆ 6. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

Ռազմավարական նպատակներ

- Զարգացնել և արդիականացնել ԵՊԼՀ ենթակառուցվածքները և կառուցվածքային ստորաբաժանումները
- Բարելավել ԵՊԼՀ կրթական միջավայրը՝ բարեկարգելով սովորողների և ՊԴ կազմի համար նախատեսված լսարանային և կաբինետային պայմանները, սպորտային մարզումներին և կրթական նպատակներին ծառայող շենքային մյուս տարածքները, ինչպես նաև սանիտարահիգիենիկ պայմանները
- Համալրել ԵՊԼՀ նյութատեխնիկական բազան

Ռազմավարական նպատակների նախանշվող վերջնարդյունքներ

- Բարելավված կրթական միջավայր, այդ թվում՝ բարեկարգված լսարանային ու կաբինետային պայմաններ, սպորտային մարզումներին և կրթական նպատակներին ծառայող շենքային այլ տարածքներ
- ԵՊԼՀ արդիականացված և բարելավված ենթակառուցվածքներ՝ ներառյալ առողջապահական, հանրակացարանային, հրատարակչական, տպարանային, հանրային սննդի ու հանգստի կազմակերպման և այլ ծառայություններ մատուցող ենթակառուցվածքներ

Ռազմավարական խնդիր	Խնդրի իրագործման համար անհրաժեշտ գործողություններ	Իրականացվող գործողությունների վերջնարդյունքներ	Պատասխանատու	Կատարման ժամկետ
Ռազմավարական խնդիր 1. Բարեկարգել ԵՊԼՀ մասնաշենքերը և տարածքները	6.1.1. Ավարտել ԵՊԼՀ-ի մասնարդային հարկի շինարարական աշխատանքները և Կոնֆուցիուսի ինստիտուտի մասնաշենքի տանիքի կապիտալ վերանորոգումը	6.1.1 -6.1.3. Վերանորոգված և բարեկարգված մասնաշենքեր և տարածքներ	Աշխատակազմի կառավարման և տնտեսավարման հարցերով պրոռեկտոր	2019-2023
	6.1.2. Ավարտին հասցնել 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկի վնասված և շահագործման համար վտանգավոր տարածքները և ըստ անհրաժեշտության՝ իրականացնել մասնաշենքերի		Շենք, շինությունների և տնտեսավարման վարչություն	

	ընթացիկ նորոգման ու ներքին հարդարման աշխատանքներ			
	6.1.3. Իրականացնել 2-րդ մասնաշենքի սպորտդահլիճի վերանորոգում			
	6.1.4 Իրականացնել մասնաշենքերի սանհանգույցների վերանորոգում՝ ներառյալ ջրագծերի և կոյուղագծերի խողովակների մոնտաժման աշխատանքներ	6.1.4. Վերանորոգված և բարեկարգված սանիտարահիգիենիկ պայմաններ	Շենք, շինությունների և տնտեսվարման վարչություն	2019-2023
	6.1.5. Իրականացնել 1-ին մասնաշենքին հարող բակի տարածքի և սպորտդահլիճին հարող մայթերի ասֆալտապատում	6.1.5. Բարելավված բակային տարածքներ		2019-2022
Ռազմավարական խնդիր 2. Բարելավել Հ. Էմին-123 հասցեում գտնվող ԵՊԼՀ հանրակացարանային մասնաշենքը	6.2.1. Կազմակերպել և իրականացնել հանրակացարանային մասնաշենքի 2-րդ և 3-րդ հարկերի գազաֆիկացում	6.2.1 -6.2.3. Կենվորների համար ավելի բարեկարգ պայմանների ապահովում	Շենք, շինությունների և տնտեսվարման վարչություն	2020-2022
	6.2.2 Ձեռք բերել մասնաշենքերին անհրաժեշտ գույք		Շենք, շինությունների և տնտեսվարման վարչություն	2020-2022
	6.2.3. Իրականացնել միջանցքների, սենյակների և սանհանգույցների ընթացիկ նորոգման ու ներքին հարդարման, վերանորոգման աշխատանքներ		Շենք, շինությունների և տնտեսվարման վարչություն	2020-2022
Ռազմավարական խնդիր 3. Վերագործարկել Հ. Էմին 123	6.3.1. Ուսումնասիրել և գնահատել տպարանի վերագործարկման կարիքները	6.3.1 -6.3.2. Վերագործարկված տպարան և վերսկսված	Շենք, շինությունների և տնտեսվարման վարչություն	2020-2022

<p>հասցեում տեղակայված տպարանը</p>	<p>6.3.2. Հագեցնել տպարանը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով</p>	<p>տպագրական և հրատարակչական աշխատանքներ</p>		
<p>Ռազմավարական խնդիր 4. Բարելավել ԵՊԼՀ աշխատակիցների և սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման գործընթացը, խթանել գիտակրթական, մշակութային և այլ միջոցառումների կազմակերպումը ԵՊԼՀ-ի Ծաղկաձորի հանգստյան տանը</p>	<p>6.4.1. ԵՊԼՀ աշխատակիցներին և սովորողներին ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ Ծաղկաձորի հանգստյան տանը իրենց հանգիստը ու տարատեսակ միջոցառումներ կազմակերպելու վերաբերյալ և ապահովել աջակցություն ու բարենպաստ պայմաններ՝ շուկայականից ցածր գներով</p>	<p>6.4.1. Աշխատակիցների և սովորողների հանգստի ու ժամանցի կազմակերպման, ինչպես նաև գիտակրթական, մշակութային և այլ միջոցառումների կազմակերպման բարենպաստ պայմաններ ու հնարավորություններ</p>	<p>Ուսումնական բաժին Շենք, շինությունների և տնտեսվարման վարչություն</p>	<p>2019-2023</p>

ԲԱԺԻՆ 7. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջազգայնացման ուղղությամբ ԵՊԼՀ-ի գործունեության առանցքային ոլորտներ

- Կրթական գործընթացի միջազգայնացում
- Գիտահետազոտական գործընթացի միջազգայնացում
- Կարիերայի կառավարման գործընթացների միջազգայնացում
- Կրթության որակի ապահովման գործընթացների միջազգայնացում

Ռազմավարական նպատակներ

- Բազմազանեցնել և ընդլայնել ԵՊԼՀ-ի միջազգայնացմանն ուղղված համալիր գործընթացները՝ ապահովելու բուհի շարունակական ակտիվ մասնակցությունը բարձրագույն կրթության միջազգային տարածքների ինտեգրման գործընթացներին և միջազգային բուհական ցանցերին
- Ապահովել Բոլոնիայի գործընթացի նպատակների հետևողական իրագործումը բուհում
- Աջակցել ԵՊԼՀ ուսանողական կառույցների մասնակցությանը միջազգային ուսանողական կառույցների աշխատանքներին

Ռազմավարական նպատակների նախանշվող վերջնարդյունքներ

- Ներպետական և միջազգային ցանցային համագործակցության և անդամակցության շրջանակներում տարվող աշխատանքների ակտիվացում, միջազգային ու տարածաշրջանային գիտակրթական նոր ցանցերում և կառույցներում ներգրավվածության աճի ցուցանիշներ
- Առաջատար բուհերի և միջազգային կառույցների ընդլայնված երկարաժամկետ համագործակցություն՝ նոր հնարավորություններով և գործակցային ուղղություններով
- Շարժունությանը օժանդակող գործընթացների առկայություն, միջազգային փոխանակման և շարժունության ծրագրերի իրականացման և մասնակցության աճ
- Համատեղ իրականացված գիտական հետազոտությունների, գիտաժողովների, շարունակաբար կազմակերպված միջազգային լեզվական քննությունների աճ, միջազգային մասնագետներով համալրված մասնագիտական խորհուրդներ, համատեղ իրականացվող կրթական ծրագրերի ավելացված թվաքանակ
- Միջազգային մասնագետների ներուժի ներգրավում կրթական ծրագրերում, օտարերկրյա և սփյուռքահայ սովորողների թվաքանակի աճ

Ռազմավարական խնդիր	Խնդրի իրագործման համար անհրաժեշտ գործողություններ	Իրականացվող գործողությունների վերջնարդյունքներ	Պատասխանատու	Կատարման ժամկետ
Ռազմավարական խնդիր 1. Ապահովել և ընդլայնել միջազգային բարձրագույն կրթական տարածքներին ԵՊԼՀ-ի ինտեգրման գործընթացները	7.1.1. Ուսումնասիրել բուհերի միջազգայնացման գործընթացների համաշխարհային փորձը, կատարել համեմատական վերլուծություն և ներկայացնել առաջարկների փաթեթ	7.1.1. Միջազգային փորձի վերլուծություն և նոր առաջարկների փաթեթ	Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն	2019-2020
	7.1.2. Մշակել միջազգայնացման ռազմավարություն և կատարել գործընթացների տարեկան մշտադիտարկում	7.1.2. Հաստատված միջազգայնացման ռազմավարություն և մշտադիտարկման մեխանիզմների ու գործընթացների առկայություն	Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն ԵՊԼՀ համապատասխան ստորաբաժանումներ	2019-2020
	7.1.3. Ընդլայնել եվրոպական, ասիական, ամերիկյան, ԱՊՀ և այլ տարածաշրջանների բարձրագույն կրթության տարածքներին ԵՊԼՀ-ի ինտեգրման գործընթացները և համագործակցության շրջանակները	7.1.3. ԵՊԼՀ-ի միջազգային ու տարածաշրջանային ինտեգրման ընդլայնված գործընթացներ և համագործակցության շրջանակներ	Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն Իրավաբանական բաժին	2019-2022

	<p>7.1.4. Ակտիվացնել գործող ներպետական և միջազգային ցանցային համագործակցության և անդամակցության շրջանակներում ԵՊԼՀ-ի կողմից տարվող աշխատանքները, մասնավորապես՝ «ԱՊՀ ցանցային համալսարանի», «Սևծովյան համալսարանների ասոցիացիայի», «Մանկավարժական համալսարանների եվրասիական ասոցիացիայի», «Ֆրանկոֆոն համալսարանների ասոցիացիայի», «Չինարեն դասավանդողների եվրասիական ասոցիացիայի», «Եվրոպական լեզվական խորհուրդի» «Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումի» և այլ կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներին</p>	<p>7.1.4. Ներպետական և միջազգային ցանցային համագործակցության և անդամակցության շրջանակներում ակտիվացված և ընդլայնված աշխատանքների շրջանակներ</p>	<p>Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն</p> <p>ԵՊԼՀ համապատասխան ստորաբաժանումներ</p>	<p>2019-2022</p>
	<p>7.1.5. Կատարելագործել ԵՊԼՀ ցանցային համագործակցության կառուցակարգերը՝ ներգրավվելով միջազգային ու տարածաշրջանային գիտակրթական, բուհական նոր ցանցերում և կառույցներում</p>	<p>7.1.5. Ներգրավվածություն միջազգային ու տարածաշրջանային գիտակրթական, բուհական նոր ցանցերում և կառույցներում</p>		

Ռազմավարական խնդիր 2. Ընդլայնել և բազմազանեցնել ԵՊԼՀ համագործակցության շրջանակները արտասահմանյան բուհերի և միջազգային կառույցների հետ՝ կիրառելով համագործակցության տարբեր ձևաչափեր	7.2.1. Հետամուտ լինել ԵՊԼՀ-ի կողմից իսկ կնքված առկա համագործակցության պայմանագրերով ստանձնած երկկողմանի պարտավորությունների՝ ժամանակին և պատշաճ իրականացմանը՝ կատարելով դրանց պարբերական գնահատումներ	7.2.1. Գործող պայմանագրերով ստանձնած երկկողմանի պարտավորությունների՝ ժամանակին և պատշաճ կատարում և դրանց պարբերական գնահատումների արդյունքներ	Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն Իրավաբանական բաժին ԵՊԼՀ համապատասխան ստորաբաժանումներ	2019-2022
	7.2.2. Կնքել համագործակցության նոր պայմանագրեր օտարերկրյա բուհերի, գիտահետազոտական կենտրոնների և միջազգային կառույցների հետ ԵՊԼՀ գերակա ուղղություններով՝ հատկապես կարևորելով համատեղ ՄԿԾ-ների իրականացումը, կրկնակի կամ համատեղ որակավորումների շնորհումը, սովորողների և ՊԴ կազմի փոխանակումն ու շարժունությունը, համատեղ գիտահետազոտական աշխատանքների ու գիտակրթական միջոցառումների իրականացումը	7.2.2. Օտարերկրյա բուհերի, գիտահետազոտական կենտրոնների և միջազգային կառույցների հետ ընդլայնված համագործակցություն ԵՊԼՀ գերակա ուղղություններով	Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն Իրավաբանական բաժին ԵՊԼՀ համապատասխան ստորաբաժանումներ	2019-2023
	7.2.3. Շարունակել և ընդլայնել համագործակցությունը տարբեր երկրների դեսպանությունների, ներկայացուցչությունների և կազմակերպությունների հետ՝ համապատասխան լեզուների ուսուցման արդյունավետությունը	7.2.3. Տարբեր երկրների դեսպանությունների, ներակայացուցչությունների և կազմակերպությունների հետ ընդլայնված և արդյունավետ համագործակցություն	Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն Իրավաբանական	2019-2023

	<p>բարելավելու, նոր ՄԿԾ-ներ ներդնելու նպատակով, կիրառել հաագործակցության տարբեր ձևաչափեր՝ ներառյալ համապատասխան երկրներից մասնագետների հրավիրում, գրականության, սարքավորումների և այլ ռեսուրսների ստացում, համատեղ միջոցառումների կազմակերպում և գիտաուսումնական նոր կենտրոնների ստեղծում</p>		բաժին	
	<p>7.2.4. Ուսումնասիրել արտասահմանյան, միջազգային դոնոր և դրամաշնորհատու կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորությունները, մշակել և ներկայացնել ծրագրեր՝ հնարավոր ֆինանսավորում ստանալու նպատակով</p>	<p>7.2.4. Արտասահմանյան, միջազգային դոնոր և դրամաշնորհատու կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնված հնարավորություններ</p>	<p>Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն Ֆինանսական վարչություն</p>	2019-2022
	<p>7.2.5. Հզորացնել ԵՊԼՀ Կոնֆուցիուսի ինստիտուտը, բարելավել պայմանները և ընդարձակել նրա գործունեության շրջանակները՝ չինարեն լեզվի ու մշակույթի և չինագիտության ուսուցման, այդ ուղղություններով մասնագետների պատրաստման, գիտակրթական, մշակութային և այլ միջոցառումների կազմակերպման և այլ ուղղություններով, ընդլայնել համագործակցությունը Չինաստանի ԿԳՆ-ին առընթեր</p>	<p>7.2.5. ԵՊԼՀ Կոնֆուցիուսի ինստիտուտի ընդարձակված ու ընդլայնված գործունեություն և բարելավված պայմաններ, Չինաստանի «Չինարեն լեզվի տարածման» գլխամասային գրասենյակի (Hanban) հետ խորացված համագործակցություն</p>	<p>Կոնֆուցիուսի ինստիտուտ Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն Ուսումնական բաժին Ֆինանսական վարչություն</p>	2019-2023

	«Չինարեն լեզվի տարածման» գլխամասային գրասենյակի (Hanban) հետ			
	<p>7.2.6. Ընդլայնել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ու Ֆրանկոֆոն համալսարանների ասոցիացիայի հետ համագործակցության շրջանակները՝ մեծացնելով կրթագիտական, մշակութային և այլ ծրագրերի թիվը և դրանց համար հատկացվող ֆինանսավորման ծավալները</p> <p>7.2.6.1. Ակտիվացնել ու բազմազանեցնել ԵՊԼՀ Ֆրանկոֆոն հետազոտությունների միջհամալսարանական ակադեմիական նվաճումների կենտրոնի գործունեությունը</p>	<p>7.2.6. -7.2.6.1. Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության և Ֆրանկոֆոն համալսարանների ասոցիացիայի հետ ընդարձակված համագործակցություն, կրթագիտական, մշակութային և այլ ծրագրերի թվի աճ, ԵՊԼՀ Ֆրանկոֆոն հետազոտությունների միջհամալսարանական ակադեմիական նվաճումների կենտրոնի ակտիվ գործունեություն</p>	<p>Ֆրանկոֆոն հետազոտությունների միջհամալսարանական ակադեմիական նվաճումների կենտրոն, Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն</p> <p>Ֆինանսական վարչություն</p> <p>Ռոմանական լեզուների ամբիոն</p>	2019-2023
	7.2.7. Մշակել և ԵՊԼՀ ստորաբաժանումներին տրամադրել տեղեկատվական և խորհրդատվական աջակցության փաթեթ՝ դրամաշնորհների հանրապետական և միջազգային աղբյուրների որոնման ու ծրագրային առաջարկների մշակման համար	7.2.7. Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության փաթեթ՝ տրամադրված ԵՊԼՀ ստորաբաժանումներին	<p>Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն</p> <p>Ֆինանսական վարչություն</p>	2019-2022
Ռազմավարական խնդիր 3	7.3.1. Իսթանբուլ և ընդարձակել ԵՊԼՀ-ի ակտիվ մասնակցությունը միջազգային, այդ թվում՝ ԵԲԿՏ-ի և ԱՊՀ-ի բարձրագույն կրթական տարածքների միջբուհական	7.3.1. ԵՊԼՀ-ի ներգրավվածություն գիտահետազոտական միջազգային հարթակներում և ակտիվ մասնակցություն	<p>Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն</p> <p>Ուսումնական,</p>	2019-2022

<p>շարժունության ճկուն մեխանիզմներ և բազմազանեցնելով դրանց ուղիները</p>	<p>համագործակցության, շարժունության, գիտահետազոտական և այլ ծրագրերին, օրինակ՝ («Էրազմուս+», «Ժան Մոնե», Հորիզոն 2020 և այլն)</p>	<p>միջազգային, այդ թվում՝ ԵԲԿՏ-ի և ԱՊՀ-ի բարձրագույն կրթական տարածքների միջբուհական համագործակցության, շարժունության և այլ ծրագրերին</p>	<p>գիտական և այլ ստորաբաժանումներ ՈՒԽ, ՈՒԳԸ</p>	
	<p>7.3.2. Խթանել ԵՊՀՀ աշխատակազմի մասնակցությունը արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին, վերապատրաստման դասընթացներին, շարժունության ծրագրերին</p>	<p>7.3.2. Արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին, վերապատրաստման դասընթացներին և շարժունության ծրագրերին ԵՊՀՀ աշխատակազմի մասնակցություն</p>	<p>Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ</p>	<p>2019-2022</p>
	<p>7.3.3. Օժանդակել սովորողների մասնակցությանը փոխանակման և շարժունության ծրագրերին, արտասահմանյան պրակտիկաներին և ամառային դպրոցներին</p>	<p>7.3.3. Սովորողների մասնակցության աճ փոխանակման և շարժունության ծրագրերին, արտասահմանյան պրակտիկաներին և ամառային դպրոցներին, ներգրավում միջազգային կազմակերպություններում ու ծրագրերում</p>	<p>Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ ՈՒԽ, ՈՒԳԸ</p>	<p>2019-2022</p>
	<p>7.3.4. Մշակել ու ներկայացնել ծրագրային նոր առաջարկներ՝ ուղղված սովորողների և աշխատակազմի ազգային ու միջազգային շարժունությանը</p>	<p>7.3.4. Շարժունության նոր ծրագրեր՝ ընդլայնելու սովորողների և աշխատակազմի շարժունությունը</p>	<p>Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ</p>	<p>2019-2022</p>

			ՈՒԽ, ՈՒԳԸ	
	7.3.5. Փոխանակման ծրագրերում ներգրավված սովորողների համար կատարելագործել և դյուրացնել ուսումնառության արդյունքների ճանաչման, ակադեմիական կրեդիտների հաշվարկման ու փոխանցման գործընթացները	7.3.5. Ուսումնառության արդյունքների ճանաչման, ակադեմիական կրեդիտների հաշվարկման ու փոխանցման դյուրացված գործընթացներ	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն ՈՒԽ, ՈՒԳԸ	2019-2022
	7.3.6. Իրականացնել միջազգային շարժունության հնարավորությունների և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվության տարածման ակտիվ քաղաքականություն՝ ԵՊԼՀ սովորողների և աշխատակազմի լիարժեք տեղեկացվածությունն ապահովելու համար, ԵՊԼՀ-ի կայքի հատուկ բաժնում և ֆեյսբուքային էջում զետեղել շարժունության հնարավորությունների և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվություն	7.3.6. Շարժունության վերաբերյալ ԵՊԼՀ սովորողների և աշխատակազմի լիարժեք տեղեկացվածություն	Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն Հանրային կապերի և լրատվության բաժին Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ ՈՒԽ, ՈՒԳԸ	2019-2023
Ռազմավարական խնդիր 4. Ապահովել կրթական, գիտական և հետազոտական ոլորտների միջազգայնացումը	7.4.1. Օտարերկրյա գործընկեր համալսարանների և կազմակերպությունների հետ պայմանագրերի շրջանակներում մշակել և իրականացնել հետազոտական ծրագրեր, գիտաժողովներ և հրատարակել գիտական ժողովածուներ	7.4.1. Համատեղ իրականացված կրթական ծրագրեր, հետազոտություններ, գիտաժողովներ և հրատարակված գիտական ժողովածուներ		

	7.4.2. Մշակել և ներդնել նոր ՄԿԾ-ների օտար լեզուներով (ռուսերեն և անգլերեն)՝ օտարերկրյա սովորողներ ներգրավելու նպատակով	7.4.2. Օտար լեզուներով (ռուսերեն և անգլերեն) դասավանդվող ՄԿԾ-ների առկայություն, համապատասխան ՊԴ կազմի առկայություն	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն	2020-2022
	7.4.3. Վերամշակել գործող ՄԿԾ-ների կառուցվածքը՝ ներդնելով «շարժունության պատուհանների» հնարավորություններ	7.4.3. Նոր կարգերի և փաստաթղթերի առկայություն՝ կապված շարժունության հնարավորությունների ընդլայնման հետ	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Իրավաբանական բաժին Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն	2019-2022
	7.4.4. Կազմակերպել միջազգային գիտաժողովներ՝ ոլորտի հայտնի մասնագետների ներգրավմամբ և մասնակցել ներկայացուցչական կազմ ունեցող միջազգային գիտաժողովների	7.4.4. ԵՊԼՀ-ի կողմից կազմակերպված միջազգային գիտաժողովներ՝ ոլորտի հայտնի մասնագետների ներգրավմամբ և ներկայացուցչական կազմ ունեցող միջազգային գիտաժողովներին մասնակցության աճ	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Արտաքին կապերի և միջազգայնացման վարչություն	2019-2022
	7.4.5. Մշակել և կիրառել միջազգային համագործակցությամբ մագիստրոսական թեզերի և ատենախոսությունների համատեղ ղեկավարման և աստիճանաշնորհման	7.4.5. Թեզերի և ատենախոսությունների համատեղ ղեկավարման և աստիճանաշնորհման մեխանիզմների առկայություն և կիրառում	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Արտաքին կապերի և միջազգայնացման վարչություն	2019-2022

	մեխանիզմներ, ավելացնել համաղեկավարմամբ մագիստրոսական թեզերի և ատենախոսությունների թիվը		Իրավաբանական բաժին ՈՒԽ, ՈՒԳԸ	
7.4.6. Ընդլայնել ԵՊԼՀ ամբիոնների և գիտաուսումնական կենտրոնների հորիզոնական համագործակցային կապերը արտասահմանյան բուհերի համապատասխան ստորաբաժանումների հետ՝ համատեղ հետազոտությունների իրականացման և շարժունության ծրագրերի ավելացման նպատակով	7.4.6. Ամբիոնների և գիտաուսումնական կենտրոնների՝ արտասահմանյան բուհերի համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ հետազոտությունների հնարավորությունների և թվաքանակի աճ	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Արտաքին կապերի և միջազգայնացման վարչություն		2019-2022
7.4.7. Ներգրավել ԵՊԼՀ-ի գիտական և մասնագիտական խորհուրդներում արտասահմանցի առաջատար մասնագետների	7.4.7. Գիտական և մասնագիտական խորհուրդների կազմում միջազգային առաջատար մասնագետների ներգրավվածություն	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Արտաքին կապերի և միջազգայնացման վարչություն		2019-2022
7.4.8. Ապահովել միջազգային լեզվական քննությունների շարունակական կազմակերպումը և ընդլայնել գործող ցանկը՝ նոր քննությունների կազմակերպման թույլտվության ստանալով (օրինակ՝ International English Language Testing System (IELTS) և այլն)	7.4.8. Առկա լեզվական քննությունների կազմակերպում, նոր քննություններ անցկացնելու թույլտվության ձեռքբերում և իրականացում	Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ Արտաքին կապերի և միջազգայնացման վարչություն		2019-2023
7.4.9. Ընդլայնել ԵՊԼՀ գրադարանի մասնակցությունը միջազգային ծրագրերին,	7.4.9. Միջազգային ծրագրերի մասնակցության ակտիվացում,	Գրադարան Արտաքին կապերի և		2019-2022

	տարածաշրջանային և միջազգային կոնսորցիումներին	բաժանորդագրություն միջազգային նշանակության հանդեսների, միջազգային էլեկտրոնային ռեսուրսների և պարբերականների	միջազգային համագործակցության վարչություն	
<p>Ռազմավարական խնդիր 5</p> <p>Ներգրավել օտարերկրյա սովորողներ, ՊԴ կազմ և մասնագետներ գիտակրթական գործընթացներում</p>	<p>7.5.1. Խթանել օտարերկրյա, ինչպես նաև սփյուռքահայ սովորողների ներհոսքը՝ իրականացնելով ուղղորդված քաղաքականություն, այդ թվում՝ նաև ամառային դպրոցների կազմակերպում</p>	<p>7.5.1. Սփյուռքահայ սովորողների թվաքանակի աճ ԵՊԼՀ կրթական ծրագրերում և մասնակցություն ամառային դպրոցներում</p>	<p>Արտաքին կապերի և միջազգայնացման վարչություն</p> <p>Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ</p> <p>ՈԻԽ, ՈԻԳԸ</p>	<p>2020-2022</p>
	<p>7.5.2. Հրավիրել արտերկրյա համալսարաններից և կառույցներից ոլորտի փորձառու մասնագետների՝ կարճատև կամ երկարատև դասավանդման նպատակով</p>	<p>7.5.2. Միջազգային փորձառու մասնագետների ներգրավում կրթական ծրագրերում</p>	<p>Արտաքին կապերի և միջազգայնացման վարչություն</p> <p>Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ</p>	<p>2019-2022</p>
	<p>7.5.3. Զարգացնել օտարերկրյա սովորողների, ՊԴ կազմի և մասնագետների աջակցության ծառայությունները</p>	<p>7.4.3. Օտարերկրյա սովորողների և ՊԴ կազմի աջակցության ծառայությունների առկայություն</p>	<p>Ուսումնական և գիտական ստորաբաժանումներ</p> <p>Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն</p> <p>Կարիերայի կենտրոն</p> <p>ՈԻԳԸ, ՈԻԽ</p>	<p>2020-2022</p>
	<p>7.5.4. ԵՊԼՀ կայքում ստեղծել հատուկ բաժին օտարերկրյա սովորողներին ընդունելության կարգի և առցանց դիմումներ լրացնելու վերաբերյալ</p>	<p>7.5.4. Օտարերկրյա սովորողների ընդունելության վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն և գործընթացի դյուրացում</p>	<p>Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն</p> <p>Հանրային կապերի և</p>	<p>2019-2023</p>

			լրատվության բաժին ՈՒԳԸ, ՈՒԽ	
Ռազմավարական խնդիր 6. Ապահովել ԵՊԼՀ սովորողներին վերաբերող գործընթացների միջազգայնացումը	7.6.1. Օժանդակել սովորողների մասնակցությանը միջազգային ուսանողական և երիտասարդական ծրագրերին	7.6.1. Միջազգային ուսանողական և երիտասարդական ծրագրերին ԵՊԼՀ սովորողների մասնակցության աճ	Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն Կարիերայի կենտրոն ՈՒԳԸ, ՈՒԽ	2019-2022
	7.6.2. Աջակցել ԵՊԼՀ ուսանողական կառույցների՝ միջազգային ուսանողական կառույցների, արտասահմանյան գործընկերների ու կազմակերպությունների հետ համագործակցության հաստատմանը և ներգրավմանը դրանց աշխատանքներում	7.6.2. ԵՊԼՀ ուսանողական կառույցների և միջազգային ուսանողական կառույցների, արտասահմանյան գործընկերների ու կազմակերպությունների միջև հաստատված համագործակցություն	Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն Կարիերայի կենտրոն ՈՒԳԸ, ՈՒԽ	2020-2022

ԲԱԺԻՆ 8. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռազմավարական նպատակներ

- Բարելավել ԵՊԼՀ կառուցվածքն ու վարչակառավարչական գործառույթները
- Ջարգացնել և արդիականացնել ԵՊԼՀ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը

Ռազմավարական նպատակների նախանշվող վերջնարդյունքներ

- ԵՊԼՀ-ի կազմակերպական կառուցվածքի, կառավարման համակարգի և ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետության բարելավված ցուցանիշներ
- ԵՊԼՀ-ի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի արդյունավետ գործարկում

Ռազմավարական խնդիր	Խնդրի իրագործման համար անհրաժեշտ գործողություններ	Իրականացվող գործողությունների վերջնարդյունքներ	Պատասխանատու	Կատարման ժամկետ
<p>Ռազմավարական խնդիր 1. Վարել ԵՊԼՀ կառուցվածքային ստորաբաժանումների կառավարչական գործառույթների ուժեղացման և ինքնուրույնության բարձրացման քաղաքականություն՝ հստակեցնելով յուրաքանչյուր ստորաբաժանման իրավասությունները և գործառույթները</p>	<p>8.1.1. Ուսումնասիրել ԵՊԼՀ կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների իրավասությունները և գործառույթները, վերհանել փոխհատվող և կրկնվող գործառույթները, ինչպես նաև բացահայտել բացակայող կամ ամրապնդման կարիք ունեցողները</p> <p>8.1.2. Ելնելով ԵՊԼՀ-ի գործառույթների արդյունավետ կատարման անհրաժեշտությունից՝ մշակել և հաստատել նոր կառուցվածք՝ ըստ անհրաժեշտության միավորելով վարչական, տնտեսական, ուսումնական որոշ ստորաբաժանումներ կամ ստեղծելով նորերը</p>	<p>8.1.1-8.1.4. Ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձր ցուցանիշներ</p>	<p>ԵՊԼՀ ստորաբաժանումներ</p> <p>Անձնակազմի կառավարման և զարգացման վարչություն</p> <p>Իրավաբանական բաժին</p>	<p>2019</p>

	8.1.3. Վերանայել կամ մշակել ԵՊԼՀ ստորաբաժանումների կանոնադրությունները, քննարկել և հաստատել դրանք ԵՊԼՀ-ի գիտական խորհրդում			
<p>Ռազմավարական խնդիր 2.</p> <p>Բարձրացնել ԵՊԼՀ ներքին արդյունավետությունը, բարելավել աշխատակազմի ընտրության ու նշանակման և ներքին կարգապահական գործընթացները, ինչպես նաև աշխատակիցների վարձատրության, խրախուսման ու սոցիալական աջակցության մեխանիզմները և պայմանները</p>	8.2.1. Ելնելով ԵՊԼՀ նոր կառուցվածքից՝ մշակել հաստիքացուցակ՝ ապահովելով բուհի ներքին արդյունավետության բարձրացում՝ հիմնված սովորող-ՊԴ կազմ, սովորող-վարչական կազմ, սովորող-ուսումնասովանողական կազմ և այլ ցուցանիշների արդյունավետության վրա	8.2.1-8.2.4. ԵՊԼՀ աշխատակիցների հստակեցված աշխատանքային պարտականություններ և բարելավված աշխատանքի արդյունավետություն	ԵՊԼՀ ստորաբաժանումներ	2019-2022
	8.2.2. Մշակել և/կամ վերանայել բոլոր հաստիքների աշխատանքային պարտականությունների նկարագրերը (պաշտոնների նկարագրեր) և ներառել դրանք աշխատողների հետ կնքվող պայմանագրերում			
	8.2.3. Վերամշակել, հաստատել և կիրարկել վարչական և ՊԴ կազմերի մրցութային ընտրության, նշանակման և տեղակալման ընթացակարգերը՝ սահմանելով աշխատանքային փորձի, կրթական գործընթացում նորարարական տեխնոլոգիաների ու մոտեցումների կիրառման, գիտահետազոտական գործունեության, տարբեր նախաձեռնություններում մասնակցության և այլ չափանիշներ			
	8.2.4. Վերանայել ԵՊԼՀ-ի ներքին կարգապահական կանոնները և կանոնակարգերը՝ միտված			

	աշխատանքային կարգապահության բարձրացմանը			
	8.2.5. Մշակել և ներդնել ԵՊԼՀ-ի աշխատակիցների սոցիալական աջակցության փաթեթներ՝ անձնակազմի սոցիալական կարիքները բավարարելու նպատակով	8.2.5-8.2.7. ԵՊԼՀ աշխատակիցների բարելավված աշխատանքային պայմաններ և սոցիալական վիճակ	ԵՊԼՀ ստորաբաժանումներ	2019-2022
	8.2.6. Մշակել և աշխատակիցներին առաջարկել բժշկական ապահովագրության փաթեթ			
	8.2.7. Ելնելով գործունեության արդյունքներից՝ մշակել ՊԴ կազմի աշխատանքի վարձատրության և խրախուսման տարբերակման մեխանիզմներ՝ մասնագիտական զարգացումը խթանալու նպատակով			
Ռազմավարական խնդիր 3 Բարելավել ԵՊԼՀ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավար կազմի կառավարման հմտությունները	8.3.1. Իրականացնել տարբեր ուղղվածության մասնագիտական զարգացման և վերապատրաստման դասընթացներ ստորաբաժանումների ղեկավար և վարչական կազմերի համար	8.3.1-8.3.2. ԵՊԼՀ աշխատակազմի բարելավված գործունեություն	Անձնակազմի կառավարման և զարգացման վարչություն ՈԱԲ կենտրոն	2019-2022
	8.3.2. Կատարել ԵՊԼՀ ՊԴ և վարչական կազմերի գործունեության վերլուծություն՝ վերհանելով բացթողումները, ուժեղ կողմերը և առաջադրելով կատարողականի ու կառավարման հմտությունների բարելավմանն ուղղված ուղիներ			
Ռազմավարական խնդիր 4 Բարձրացնել ԵՊԼՀ-ի նկատմամբ բոլոր շահակիցների վստահությունը՝ ապահովելով	8.4.1. Բարելավել ԵՊԼՀ-ի հաշվետվությունների կազմման բովանդակային և ընթացակարգային մեխանիզմները և ապահովել հաշվետվությունների ժամանակին	8.4.1 ԵՊԼՀ գործունեության մասին բաց և հավաստի տեղեկատվության առկայություն	ԵՊԼՀ ստորաբաժանումներ	2019-2022

ԵՊԼՀ գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը	հրապարակումը			
	8.4.2. Մշակել ու կիրառել կոռուպցիոն ռիսկերի վերհանման, կանխարգելման և վերահսկման մեխանիզմներ, սահմանել բարեվարքության սկզբունքներ	8.4.2 Կոռուպցիոն ռիսկերի վերհանման ու կանխարգելման մեխանիզմների և բարեվարքության սկզբունքների առկայություն		
	8.4.3. Գործարկել ԵՊԼՀ ներքին կառավարման տեղեկատվական համակարգը, իրականացնել վիճակագրական և այլ տվյալների պարբերական մուտքագրում, վերլուծություն և հրապարակում	8.4.3. ԵՊԼՀ-ի թափանցիկ գործունեություն		
	8.4.4. Մշակել և գործառնել կրթության գնահատման, լեզուների իմացության և լեզվական հմտությունների գնահատման ու թեստավորման հայեցակարգ և համապատասխան կառուցակարգեր՝ ներքին և արտաքին շահակիցների թիրախային տարբեր խմբերի համար	8.4.4. Կրթության գնահատման, լեզուների իմացության և լեզվական հմտությունների գնահատման ու թեստավորման հայեցակարգի և համապատասխան կառուցակարգերի առկայություն	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն ՈԱԲ կենտրոն	2019-2023
	8.4.5. Հիմնել համապատասխան ստորաբաժանում՝ համակարգելու ԵՊԼՀ-ի՝ կրթության գնահատման, լեզուների իմացության և լեզվական հմտությունների գնահատման ու թեստավորման հանձնառությունները	8.4.5. Համապատասխան ստորաբաժանման առկայություն	Իրավաբանական բաժին Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն ՈԱԲ կենտրոն	2019-2023

